Հասկի մեջ սերմնահատիկի ծլման գործընթացն ուղեկցվում է կենսաքիմիական ռեակցիաների համալիրով: Դրանցից մեկն ալֆա-ամիլազա ֆերմենտի սինթեզման խթանումն է, որը քայքայում է հատիկի օսլան եւ հանգեցնում է Անկման թվի նվազման: Նման ցորենի որակը կտրուկ վատանում է, ընդհուպ մինչեւ հացաթխման որակի կատարյալ կորուստ:

Կարդացեք՝ էջ 4

Փաշինյանի սցենարը պարզ է. ինքն առաջնորդում է այդ խաժամուժին դեպի Էջմիածին, որի մեջ լինելու են նաեւ Եկեղեցու կողմից կարգալույծ արված նախկին եկեղեցականներ, տարբեր աղանդավորական շարժումների ներկայացուցիչներ: ՀԱԵ հոգեւորականները եւ հավատացյալները փորձելու են պաշտպանել եկեղեցին նման ասպատակությունից:

Կարդացեք՝ էջ 5

Այն, որ Գ. Մինասյանն ու Անդրեասյանը սխալ են արել, փաստվել է ՄԻԵԴ եւ ՍԴ որոշումներով, այն, որ ներկայիս ԲԴԽ կազմը չգիտեմ ինչ հրաշքով կամ պատճառաբանություններով լիազորությունների վերականգնման պատասխանատվության ենթարկելը մերժելու վերաբերյալ որոշումներ չի կայացրել, դեռ չի նշանակում, թե իրենք ճիշտ են:

Կարդացեք՝ էջ 6

Հրապարակ

Hraparak daily newspaper
4/41 Mashtoc St.
0010 Yerevan, RA
tel.52 66 70
info@hraparak.am

ISSN 1829-2372

ՕՐԱԹԵՐԹ, 200 դրամ

N 182 (4084), 14 նոյեմբեր, ուրբաթ, 2025

www.hraparak.am

Հայաստանում հավատարմագրված ԵՄ անդամ պետությունների մի քանի տասնյակ դեսպաններ օրեր առաջ հանդիպումներ ունեցան իշխանության ներկայացուցիչների հետ՝ ԱԺ նախագահ, փոխնախագահ, ԱԽ քարտուղար, Նիկոլ Փաշինյան: Պաշտոնապես կցկտուր տեղեկություններ հաղորդեցին այդ հանդիպումներից, գրեթե բոլոր հաղորդագրություններում նույն տեքստն էր՝ քննարկել են Հայաստան-ԵՄ հարաբերությունների ընթացիկ օրակարգը, արձանագրված առաջընթացը եւ հետագա համագործակցության հեռանկարները, Վաշինգտոնում Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ ձեռք բերված պայմանավորվածությունները, նույնիսկ՝ Հայաստան-Թուրքիա կարգավորման գործընթացը: Իշխանական կուլիսներում խոսում են, որ դեսպանները համապետական ընտրությունների նախաշեմին փորձում են իրենց «փայը» ստանալ ՀՀ իշխանություններից՝ դրա դիմաց խոստանալով, որ նախընտրական ճնշումների եւ ընտրակեղծիքների վրա աչք կփակեն եւ կարձանագրեն ժողովրդավարական ընտրությունների փաստը: Պահանջը հետեւյալն է. Հայաստանը պետք է ԵՄ-ին անդամակցելու հայտը պաշտոնապես ձեւակերպի: Իշխանականները չեն բացառում, որ տարեսկզբին այդ հայտը կներկայացվի: Հիշեցնենք, որ չնայած ամիսներ առաջ ԱԺ-ն ընդունել է ԵՄ-ին անդամակցելու գործընթացի մեկնարկի մասին հայտարարության նախագիծ, սակայն դրանից հետո սայլը տեղից չի շարժվել, գործնականում ոչ մի քայլ չի արվել: Ի դեպ, հենց այս կոնտեքստում էլ խոստացել են, որ եթե Հայաստանը հրաժարվի ռուսական ցորենից, իրենք ուկրաինականը կապահովեն: Բացի այդ, ԵՄ-ն պահանջում է նաեւ իր ներգրավվածությունը Թրամփի ուղուն, որի դիմաց քաղաքական, ֆինանսական ու փորձագիտական օգնություն կցուցաբերի Փաշինյանի ռեժիմի վերարտադրությանը:

ՔՊ-ում հասկացել են, որ վաշինգտոնյան համաձայնություններից հետո թմբկահարվող խաղաղության կեղծ օրակարգով հնարավոր չեղավ հանրությանը երկար կերակրել, որոշել են կրկին վերադառնալ «նախկինների» թեմային՝ թալան, Արցախի հանձնում եւ այլն, բոլոր մեղքերը բարդելով նրանց վրա: ՔՊ-ականների համար հատկապես պարարտ հող ստեղծեցին նախկին երկու նախագահների հարցազրույցները: Արդեն քանի օր է՝ հրահանգված ու նույն տեքստերով «քլնգում» են նախկին նախագահներին, իսկ երեկ բյուջեի քննարկման իր եզրափակիչ ելույթում Նիկոլ Փաշինյանը մինչեւ անգամ հայտարարեց. «Ռոբերտ Քոչարյանի եւ Սերժ Սարգսյանի առաջնորդած ուժերը պարզապես պետք է չլինեն հաջորդ խորհրդարանում»:

Ուղեղների լվացում

Տարրական տրամաբանությունն ասում է, որ դժգոհելու, քննադատելու եւ անգամ հայհոյելու լիքը առիթներ ունի ժողովուրդը: Այն, ինչ կատարվել է այս 7 տարվա ընթացքում, այն բոլոր աղետները, որ եղել են այս իշխանությունների ժամանակ, ամենամեծ ցանկության դեպքում անգամ չեն կարող չվերագրվել ՔՊ-ին ու նրա առաջնորդին, ուստի դեռ շատ զուսպ ու մեղմ ժողովուրդ ունենք մենք, որ այս ամենը հանդուրժում է եւ դեռ 2021-ին էլ վերընտրեց սրանց: Բայց իշխանությունը դժգոհ է: Դժգոհ է, որ իրեն առաջվա պես չեն սիրում, որ ոմանք իրեն քննադատում են եւ անգամ համարձակվում հայհոյել, եւ գործի է դնում ռեպրեսիվ մեթոդներով դժգոհության, բողոքի ձայները լռեցնելու գործիքակազմը: 30 տարվա ընթացքում մենք ամեն ինչ տեսել ենք՝ եւ քաղաքական հետապնդումներ, եւ ազատ խոսքի նկատմամբ ոտնձգություններ, եւ անարդար դատավճիռներ, բայց որ իշխանությանը քննադատած անձի տուն ուղարկեն դիմակավորված «Ալֆա»-ին եւ լրագրողներին նվաստացնելով տեղափոխեն մեկուսարան, փորձելով կալանքի սանկցիա տալ ու դատել, անկեղծորեն չենք հիշում: Առավել ուշագրավ է, որ այս ամենը կատարվում է մասնագիտությամբ լրագրող, նախկին խմբագիր Նիկոլ Փաշինյանի հրահանգով: Գուցե խոսքի նկատմամբ հարգանքն ու խոսքն արժեւորելու հանգամանքն է պատճառը, որ Փաշինյանը նոր մշակույթ ներմուծեց մեր կյանք՝ խոսքի համար կալանավորելու եւ դատելու մշակույթը: Նախկին իշխանությունները ոչ այդքան կարեւորում էին խոսքը, ոչ խոսքի համար մարդ էին բռնում, ոչ էլ այսքան շատ խոսում էին, ինչքան այս իշխանությունները, որոնք մեծից փոքր, 24 ժամ շարունակ լայվ են մտնում, ելույթներ ունենում, գրառումներ անում, համաժողովներ ու քննարկումներ կազմակերպում՝ մարդկանց ուղեղները լվանալով եւ իրենց չարաբաստիկ գործողություններն արդարացնելով:

Մինչ Նիկոլ Փաշինյանը քրեական ենթամշակույթի դեմ պայքարի իմիտացիա է ստեղծում, իր ընտանիքի անդամները մտերմանում են գողականների եւ հեղինակությունների ընտանիքների հետ: Նախօրեին Աննա Հակոբյանի հետ հերթական վճարովի ընթրիքին մասնակցում էին օրենքով գող Արսեն Մկրտչյանի՝ Արսեն Երեւանսկու կինն ու դուստրը, որոնք աշխատեցնում են «Նայեք աղջիկներ» խանութը: Համացանցում բազմաթիվ լուսանկարներ են տարածվել տարբեր այլ խնջույքներից ու միջոցառումներից եւս, որոնց մասնակցում են օրենքով գողի կինը, դուստրը եւ Փաշինյանի դուստրերը: Ասում են, որ նրանք վերջին շրջանում շատ մտերմացել են Երեւանսկու ընտանիքի հետ եւ անգամ կրոնական նույն նախասիրություններն ունեն:

ՈՎ ԷՐ «ՕՏԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼԸ»

Գլխավոր շտաբի նախկին պետ Արթուր Դավթյանը, պարզվում է՝ ըստ 44-օրյա պատերազմի հանգամանքները քննող հանձնաժողովի, կասկածվում է «ազդեցության գործակալ» լինելու մեջ: Նախօրեին պատգամավոր Գեղամ Մանուկյանն իր ելույթում անանուն հիշատակեց այդ փաստը: Նա, խոսելով Փաշինյանի կադրային քաղաքականության մասին, ասաց, որ զինվորական պաշտոնում «խիստ կասկածելի հիմքով» նշանակումներ է արել, որոնք արձանագրված են անգամ քննիչ հանձնաժողովի զեկույցում. «Կա արձանագրում, որ բարձրագույն զինվորական պաշտոնի եղել է մարդ, որը չի բացառվում, որ այլ երկրի ազդեցության գործակալ է: Կա արձանագրում, որ տասնյակ միլիոնավոր դոլարների ռազմական գնում է կատարվել, հակառակ զգուշացումներին՝ Նիկոլ Փաշինյանին... Կա արձանագրում, որ տասնյակ միլիոնավոր դոլարների ՀՕՊ համակարգ է գնվել, որն անարդյունավետ է եղել, միակ դեպքն է, որ Գլխավոր դատախազությունն այդ ժամանակ գրություն եք ուղարկել՝ չկա հետեւանք»: Հիշեցնենք, որ Դավթյանը պաշտոնավարել է 2018-2020 թթ., հետո կրկին նշանակվել է Գլխավոր շտաբի պետ, երբ նախկին ԳՇ պետ Օնիկ Գասպարյանը եւ այլ զինվորականներ պահանջեցին Փաշինյանի հրաժարականն ու պաշտոնանկ արվեցին: Այսինքն՝ Դավթյանն այն եզակի գեներալներից է եղել, որոնք պատերազմից հետո աջակցում էին Փաշինյանին, ուստի աչք է փակվել այլ երկրի «ազդեցության գործակալ» լինելու կասկածների վրա: Եվ հիմա նրա ցուցմունքի հիման վրա գործ է հարուցվել նախկին Պնախարար Արշակ Կարապետյանի դեմ՝ Սեւ լճի տարածք ներխուժելու դեպքով: Ըստ մեղադրանքի, Կարապետյանը նահանջի անհիմն հրաման է տվել, լինելով ԳՇ պետ Դավթյանի տեղակալը: Փաստորեն, 21-ին սխալ հրաման է տրվել, ապա նրա պաշտոնը բարձրացրել են՝ նշանակելով նախարար, եւ միայն ընդդիմադիր դառնալուց հետո հիշել են նախկին «մեղքերը»:

ԳՈՐԻՍ

«88» ՄԱՐԿԵՏՆԵՐԻ ՑԱՆՑԸ ԳՐԱՎՈՒՄ Է ՍՅՈՒՆԻՔԸ

Սյուզան ՍԻՄՈՆՅԱՆ
syuzan.simonyan@hraparak.am

«Ծիրան» եւ «88» սուպերմարկետների սեփականատեր, նորահայտ օլիգարխ Նարեկ Նալբանդյանը շարունակում է արշավանքը Հայաստանով մեկ: Նրա ձեռագիրը հայտնի է՝ նա նոր ներդրումներ չի անում առեւտրի ոլորտում, այլ վերցնում է անուն հանած, բայց ինչ-ինչ պատճառներով սնանկացած բիզնեսները կամ ստիպում է, որ գործող բիզնեսը վաճառեն իրեն: Այդպես եղավ «Ծիրան» սուպերմարկետների ցանցի, «Սան ֆուդ» բրենդի հետ, որը դարձավ «88»՝ կորցնելով իր անունը: «Սան ֆուդի» հաճախորդները դժգոհ են: «Ես այստեղից միայն հաց եմ գնում: Մյուս ապրանքներին մոտենալ չի լինում, այնքան են գները բարձրացել»,- ասում է «Սան ֆուդի» արդեն նախկին հաճախորդ, Շենգավիթի բնակիչ Արմինե Հ.-ն:

«88»-ն արմատներ է գցել նաեւ Սյունիքի խոշոր քաղաքներում՝ Սիսիանում եւ Կապանում: Սյունեցիները եւս գոհ չեն: Հետաքրքիր զուգադիպությամբ, այն մարկետներում, որոնք անցնում են նորահայտ օլիգարխի ձեռքը, հարկային ստուգումներ են արվում, խախտումներ են հայտնաբերվում: Այդպես է եղել նաեւ Գորիս քաղաքում վերջին 9 տարիներին հաջողությամբ գործող «Արարատ» սուպերմարկետի հետ, որը, ըստ գորիսեցիների, բավական բարձրորակ մթերք էր վաճառում: Մինչեւ նոյեմբերի 1-ը այն դեռ «Արարատ» էր, նոյեմբերի 1-ից հետո դարձավ «88»: Դա Գորիսի ամենախոշոր ու հայտնի սուպերմարկետն էր: Ամենամեծ առեւտրի շարժն «Արարատում» էր լինում: Բնականաբար, տերերը չէին պատրաստվում վաճառել ծաղկող բիզնեսը, եւ ինչո՞ւ վաճառել այն, ինչն ահռելի եկամուտ է բերում:

Գորիսում պատմում են, որ մոտ 1 ամիս առաջ Նարեկ Նալբանդյանն իր թիկնազորով գնացել է Գորիս եւ «Արարատի» տերերին ասել, որ ուզում է գնել սուպերմարկետը: Բայց «Արարատի» տերը պատասխանել է, որ չի պատրաստվում վաճառել խանութը: Հետո քաղաքում լուր է տարածվել, թե Նարեկը խոստացել է, որ մինչեւ դեկտեմբեր «Արարատ» սուպերմարկետն իրենը կլինի: Ապա խանութում ստուգումներ են սկսվել: Գորիսի մեր աղբյուրը պատմում է, որ «շատ պրիմիտիվ բաների համար» անընդհատ ստուգել են իրենց սիրելի սուպերմարկետը, ու տուգանքը տուգանքի հետեւից է եկել:

«Մարդիկ էլ ասել են. ինչքա՞ն կարող ենք աշխատել՝ տուգանք վճարել: Խանութ է, էլի, ցանկության դեպքում միշտ էլ մի մանրուք կարելի է գտնել: Մեկ հաճախորդն է դժգոհ, մեկ ինչ-որ այլ առիթ կա ստուգելու: Եթե մարդուն չեն թողնում նորմալ աշխատի, ստիպված վաճառում է: Իրենք մի հատ մարկետ ունեին ու դա էլ են վաճառել»,- պատմում է մեր աղբյուրը: Պատմում են, որ Գորիսում «88»-ը վերցրել է նաեւ մի քանի մանր խանութ, որոնց դեռ «88» բրենդի անունը չեն տվել, այլ վերցրել են վարձակալությամբ: «Արարատի» նախկին հաճախորդները վրդովված են՝ հիմա Գորիսի Անկախության 7/22-2 հասցեում «88» սուպերմարկետ է բացվելու:

Այս տեղեկությունները չէինք հասցրել ստուգել, երբ խմբագրությունն էլեկտրոնային նամակ ստացավ Գորիսից. «Բարեւ Ձեզ, Ձեզ գրում է Գորիսի մի բնակիչ, մի շատ վտանգավոր հարցի մասին եմ ուզում տեղեկացնել. Աննա Հակոբյանի անվան հետ կապ ունեցող «88» սուպերմարկետների ցանցը ռեկետ է իրականացնում Սյունիքում: Մարզում այլեւս խոշոր բիզնես չեն թողել: Նախ փորձում են բանակցել, հետո խոշոր ակտեր են գրում: Եթե չեն համաձայնում, կարճ ժամանակ հետո գնում են բիզնեսը: Մարզի բոլոր խոշոր խանութները գնված են: Հիմա սկսել են գնել հյուրանոցներ, ռետորաններ: Նախ, որտեղի՞ց դրանց այդ ահռելի գումարները: Հետո՝ Սյունիքում մտահոգված են, որ դրանք թուրքերի համար են, եւ շուտով սյունեցիները, իրենց կամքից անկախ, կաշխատեն թշնամու բիզնեսում»:

Գորիսի լրագրողներից մեկը՝ Արմինե Սիմոնյանը, իր ֆեյսբուքյան էջում անդրադարձել է «Արարատի» փակմանը. «Քաղաքի լավագույն մարկետը բաժին ընկավ եսիմ ում, իսկ բոլորը սահմանափակվեցին ըմբոստանալ ու ցավել իրենց տներում: Սյունեցիների բիզնեսները մեկը մյուսի հետեւից տանում են, իսկ չկա մեկը, որ սաստի, թեւ ու թիկունք դառնա, պարզի՝ ինչո՞ւ պետք է տեղաբնակը վաճառի ու հեռանա: Ինչո՞ւ պետք է գա մի ցանց, որտեղ հայկական ապրանքներ գրեթե չկան»:

Ամիսներ առաջ «88»-ը Գորիսում կուլ է տվել նաեւ «Շանե» հայտնի մթերային խանութը, որի մի մասը ֆուդկորտ էր: Այն գործում էր Գորիսի Մաշտոցի 36 հասցեում: Հուլիսի վերջին ընկերությունը հայտարարություն տարածեց, որ շուտով կդադարեցնի գործունեությունը: «Սակայն մեր նախաձեռնությամբ շուտով նույն տարածքում կգործի սիրված եւ ճանաչված «88» սուպերմարկետների ցանցի նոր մասնաճյուղը: Մեր նպատակը միշտ նույնն է՝ ձեզ համար ապահովել հարմարավետ, հասանելի եւ բարձրորակ սպասարկում»,- ասվում էր «Շանե թիմ»-ի հայտարարության մեջ:

Ինչո՞ւ եք բոլորդ հաճույքով զիջում ձեր բիզնեսը Նարեկ Նալբանդյանին, ինչո՞ւ չեք ուզում շարունակել աշխատեցնել եկամտաբեր բիզնեսը. «Արարատ» սուպերմարկետի նախկին տերը՝ Մարի անունով, հրաժարվեց անգամ մինչեւ վերջ լսել իր խանութի փակման մասին մեր հարցը: «Ես շատ վատ վիճակում եմ, չեմ կարող Ձեր հարցերին պատասխանել, գիտեմ՝ ինչ եք հարցնելու, ու չեմ ուզում ոչ մեկի հետ խոսել էդ մասին»,- ասաց նա՝ ըստ էության հաստատելով մեր տեղեկությունները:

Փորձեցինք կապվել Նարեկ Նալբանդյանի հետ, խնդրել, որ մեկնաբանի գորիսեցիների պատմությունները, հարցնել՝ արդյոք ճի՞շտ է, որ անձամբ է այցելել Գորիս, «Արարատի» տերերին սպառնացել, թե սուպերմարկետը մինչեւ դեկտեմբեր իրենն է լինելու: Բայց միայն Նարեկ Նալբանդյանի փաստաբանի հետ կարողացանք կապվել, որն ասաց, որ չի կարող մեզ փոխանցել Նարեկ Նալբանդյանի համարը, բայց մեր հարցերն ու նրա մեկնաբանությունը կփոխանցի: Իր կողմից փաստաբան Կարեն Տոնոյանն ասաց. «Նարեկին թեկուզ քիչ ճանաչող մարդը չի հավատա նրան, որ նա կարող է իրեն նման ձեւով պահել»: Նա հայտնեց նաեւ, որ Նարեկ Նալբանդյանի պատասխանը մեզ կտրամադրի մի քանի օրից: Սպասում ենք:

ԵԹԵ ԻՄ ՀԱՍՑԵԻՆ ՇԱՏ ՀԵՐՅՈՒՐԱՆՔՆԵՐ ԼԻՆԵՆ, ԲԱՑ ՆԱՄԱԿՈՎ ԿԴԻՄԵՄ ԱԼԵՆ ՍԻՄՈՆՅԱՆԻՆ



Հայկա ԱԼՈՅԱՆ

Արագածոտնի թեմի ութ հոգեւորականների եւ Մայր Աթոռի որոշ բարձրաստիճան սպասավորների երեկ կանչել էին Քննչական կոմիտե: Որոշ հոգեւորականների էլ կանչելու են այսօր՝ նոյեմբեր 14-ին: Արագածոտնի թեմի Բյուրականի Սուրբ Հովհաննես եկեղեցու հոգեւոր սպասավոր **Տեր Վրթանես քահանա Բաղալյանը** «Հրապարակի» հետ զրույցում նշեց, որ ուրբաթ օրն են իրեն կանչել, սակայն ինքը կգնա երկուշաբթի՝ 16.00-ից հետո:

«Փաստաբանս վաղը նիստի է լինելու այդ ժամին, ես էլ առանց փաստաբանի չեմ ուզում գնալ: Դառը փորձ ունեմ, չափից դուրս անհարգալից իրենց վերաբերմունքից հետո մտածում եմ՝ խելամիտ չի լինի առանց փաստաբանի գնալ: Մենք միշտ մտածել ենք, որ մեր հայրենի իշխանություններն են, Եկեղեցու հանդեպ հարգանք ու պատկառանք կա, բայց այս վերջին անգամ հասկացա, որ մեր հայրենի իշխանությունները չեն, այլ կամակատարներ են, որ դրսից տերեր ունեն: Հավանաբար, դրանց հաշվետվություն պիտի տան, եւ անարխիկ վիճակ է: Սրբազան հայրն արդեն 2 ամսով կալանավորված է, բայց ես նույնիսկ չգիտեմ, թե երկուշաբթի ինչ թեմայով կլինի իմ հարցաքննությունը, որովհետեւ իրենք դեռ չեն կողմնորոշվել, թե Սրբազանին ինչ հոդվածով դատեն»,- ասաց Տեր Վրթանեսը: Խոսքն Արագածոտնի թեմի առաջնորդ Մկրտիչ սրբազանի մասին է:

Տեր Վրթանեսը նկատում է, որ այս իշխանությունները հոգեւորականներին ձերբակալում են, հետո են որոշում, թե ինչ հոդվածով կալանավայրում պահեն ու դատեն: «Փառք Աստծո, կիրակի օրով առավոտյան 9-ին չեն կանչել, ինչի համար մենք անչափ շնորհակալ ենք, մանավանդ Արթուր Պողոսյանից շատ շնորհակալ եմ, որովհետեւ ինքն ասում է, որ քննչականի աշխատակիցների այդ անհարգալից պահվածքն ինքը չի կիսում, ինքը բարի, դրական անձնավորություն է: Քննիչներն ինքնագործունեությամբ են զբաղվում, երբ մտնում են, տանդ առարկաները թափում են հատակին, քեզ չեն թողնում հագուստ հագնել, զանգի իրավունքից են զրկում կամ նորմալ չեն կերակրում, պարզվում է՝ քննչականի պետի մեղքով չի դա լինում, այլ ներքին օղակներն են ինքնագործունեություն ծավալում»,- ասաց Տեր Վրթանեսը:

Բյուրականի եկեղեցու հոգեւոր հովիվն ասում է, որ ավելի վաղ Երեւանում անցկացված՝ Ադրբեջանի եւ Հայաստանի քաղհասարակությունների ներկայացուցիչների հանդիպմանը մասնակցած ադրբեջանցի փորձագետները շատ են նեղվել մեր սարերի, բլուրների վրա տեղադրված խաչերից: Դա նրանց դուր չի եկել. «Ես առաջիկայում սպասում եմ, որ տարբեր տեղերում դրված խաչքարեր, խաչեր, որ դնում են լուսավորված, դրանց դեմ արշավ կլինի, մի մասն էլ հրատապ կերպով կապամոնտաժեն, որովհետեւ այդ խաչերի առկայությունն ադրբեջանցիների դուրը չի եկել, շատ դժգոհ են եղել: Կարծում եմ՝ շուտով կլսենք, որ տարբեր տեղերում կանգնեցված խաչքարերն ապամոնտաժվում են, խաչեր են հանվում, կարծում եմ՝ շատ արագ նման երեւույթի ականատեսը կլինենք»:

Հարցին՝ Արագածոտնի թեմի հոգեւորականները վախենո՞ւմ են կալանավորվելուց, ասաց, որ կալանավորվելուց, քրեական գործերից չեն վախենում, սակայն դժվար են պաշտպանվում բազմաթիվ զրպարտություններից: Վերջին օրինակը դեռ թարմ է. Տեր Վրթանեսը կարծում է, որ ինչ-որ մեկը կարող է հայտարարել, որ Տեր Սարգիսը «խադավիկ» է եղել, եւ իրենք 2-3 ամիս կհիմնավորեն, որ այդ մարդն ընդհանրապես «խադավիկ» չի եղել, Մանկավարժական համալսարանի պատմության ֆակուլտետն է ավարտել, լուրջ պատմաբան է, թեզ է պաշտպանել: Մի ամիս հետո էլ մեկ ուրիշը կհայտարարի՝ ձեր հոգեւոր եղբայրը հոգեւոր կրթություն չունի, կաթողիկոսի ազգականն է, դրա համար էլ հոգեւորական է: «Նման անպատասխանատու բաներ որ հայտարարում են, դրանք ժամանակ առ ժամանակ պտտում ու մեր դեմ են բերում: Տարբեր հետապնդումների ենք ենթարկվում, նույնիսկ մեր էջերի գրառումների հետ կապված, ամենանենգ ձեւերով, մանիպուլյացիաներով, մարդկանց վարկաբեկելու փորձերով: Ինձ մեկը մոտեցել է, ասում է՝ գիտեք, էն Տեր Վրթանեսի մասին լսե՞լ եք, շատ հարբեցող է, ծխամոլ է, ասում եմ՝ ճանաչո՞ւմ ես իրեն, ասում է՝ բա ո՞նց չեմ ճանաչում, անձամբ եմ տեսել՝ ինչքան է խմում, ինչքան է ծխում: Բոլորիս հետ են պարբերաբար նման դեպքեր լինում, միայն ինձ հետ չէ: Նույն ձեւի Տեր Մանուկի մասին էին այդպիսի բամբասանքներ տարածում, այսինքն՝ համատարած կերպով հոգեւորականների մասին ինչ հերյուրանք, ինչ բամբասանք ասես, տարածվում է»,- ասաց Տեր Վրթանեսը:

Հետաքրքրվեցինք՝ իսկ հերյուրանքների, վիրավորանքների մասով ոստիկանություն դիմելո՞ւ են, ասաց՝ ոչ, սակայն. «Եթե շատ կրկնվի, բաց նամակով կդիմեմ Ալեն Սիմոնյանին, ինքն է այդ հարցերով զբաղվում, ինքը որ դիմում է, այդ մարդկանց շատ արագ բերման են ենթարկում: Եթե իմ հասցեին շատ հերյուրանքներ լինեն, բաց նամակով կդիմեմ Ալեն Սիմոնյանին, ինքը հանձնարարական կտա, ոստիկաններն իրենցով արագ կզբաղվեն, թե չէ՝ եթե ես հայց էլ ներկայացնեմ, գիտեմ, ընթացք չի լինի: Օրենքը ծառայում է իրենց կուսակցության շահերին, միայն ՔՊ-ականներին է պաշտպանում, եթե ՔՊ-ական չես կամ իրենց թիմից չես, քեզ համար օրենքը չի գործում: Եթե մի ՔՊ-ական քեզ ծեծի, վիրավորի, ապա վերջում քեզ կձերբակալեն»:

Կորոյոկը չի իրացվում՝ կարտոֆիլի հետ են փոխանակում, օղի են թորում

Բերդ համայնքի սահմանամերձ Չինարի գյուղը հռչակված է իր համեղ թզով, որն ամեն տարի Մոսկվա է առաքվում: Նախկինում Չինարիի գյուղապետ, այժմ Բերդի համայնքապետարանի աշխատող Սամվել Սաղոյանը մեզ հայտնեց, որ անցյալ տարի Չինարիից Մոսկվա 1 կիլոգրամը 300 դրամով 400 տոննա թուզ են առաքել: Ռուսական ռուբլու փոխարժեքի անկման պատճառով այս տարի 350 տոննա թուզ են ուղարկել Մոսկվա, գինը՝ 200 դրամ: Առաքումն իրականացրել են Վրաստանի Շուլավերից եկած գործարարներ: Չինարիի բնակիչների համար լուրջ հիմնախնդիր է աճեցված արքայանարնջի՝ կորոյոկի իրացումը: Ս. Սաղոյանն ասում է, որ այս տարի ոռոգման հետ կապված դժվարությունների պատճառով միրգը համեմատաբար մանր է եղել, կորոյոկի «խուրմա» տեսակն է շատ: Բերքի կիլոգրամը 150 դրամ է, մանրը 100 դրամով են վաճառում, սակայն չի էլ վաճառվում: Չինարեցիների մի մասը կորոյոկը տարել է Գավառ՝ փոխանակել կարտոֆիլի հետ, մնացած բերքն էլ ստիպված կորոյոկի չիր են սարքում, օղի են թորում. «Օղի կթորենք, ձմռանը կխմենք»: Էկոնոմիկայի նախարար Գեւորգ Պապոյանը, որ համացանցում քաղաքական բնութի գրառումներ է անում, կեղծ պատարագների է մասնակցում, ժամանակ չունի, որ սահմանամերձ չինարեցիների բերքի իրացման ուղղությամբ գործնական քայլեր կատարի, իսկ պետական ծառայողների, հարկատուներից բարձր աշխատավարձ ստացող նախարարների պարտավորությունը դա է, ոչ թե խառնակչությամբ զբաղվելը:

Ոսկան ՍԱՐԳՍՅԱՆ

ԻՆՉՊԵՍ ՔՊ-ԱԿԱՆՆԵՐՆ ԱՐՀԱՄԱՐՀԵՑԻՆ ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆԻՆ

Վերջին օրերին խորհրդարանում ընթացող բյուջեի քննարկումները հանրության աչքի առաջ մերկացրին այն լիակատար «բարդակը», որ տիրում է իշխանական թիմում, հետեւաբար՝ նաեւ երկրում: Փոքրիկ թվացող երկու միջադեպ, որոնք հերթական անգամ բացահայտեցին գոյություն ունեցող անպատասխանատու վերաբերմունքը պետության եւ երկիրը կառավարելու հարցում:

Առաջինը նախօրեին էր, երբ խորհրդարանի նիստն անսպասելի ընդհատվեց, քանի որ պարտադիր զեկուցողներից վերջինը՝ Անդրանիկ Քոչարյանը, դահլիճում չէր: Նա միայն ընդմիջումից հետո շնչակտուր ներս մտավ, ապա մուննաթ եկավ ԱԺ քարտուղարության աշխատակիցների վրա, թե ինչու իրեն նախապես չէին տեղեկացրել, այսինքն՝ իր եւ իր մեծաթիվ աշխատակազմի պարտականությունները եւ կատարվածի մեղքը դրեց ուրիշների վրա: Իհարկե, դա չմեղմեց Փաշինյանի զայրույթը, քանի որ նիստն արդեն տապալվել էր: Բայց այն, ինչ կատարվեց երեկ, պարզապես խայտառակություն էր, եւ անգամ նախորդ գումարումների պատգամավորները չէին հիշում նման դեպք, երբ իշխող թիմի երեսփոխաններն ուշանան այն նիստից, որին իրենց քաղաքական ղեկավարն է մասնակցում: Երեկվա նիստն էլ սահմանված ժամին չմեկնարկեց, քանի որ ՔՊ խմբակցությունից մոտ 20 պատգամավոր բացակայում էր, ոմանք, իհարկե, գործուղման էին: Դահլիճում ներկա ընդդիմադիրներն էլ ՔՊ-ից վտարված Հովիկ Աղազարյանի հետ պայմանավորվեցին, որ ոչ մեկը չգրանցվի, եւ Նիկոլ Փաշինյանին անակնկալի բերեն՝ ցույց տալով, թե ՔՊ-ական պատգամավորներն ինչքան թքած ունեն թե՛ երկրի գլխավոր ֆինանսական փաստաթղթի վրա, որը քննարկվում էր, թե՛ իրենց աշխատանքի եւ ամենակարեւորը՝ անգամ Նիկոլ Փաշինյանի վրա, որը կարծում է, թե իշխանական թիմում ինքն անառարկելի հեղինակություն ունի, մոտավորապես՝ Հիսուս Քրիստոս:

Երբ պատգամավորների գրանցում հայտարարվեց, եւ լուսատախտակին երեւաց, որ ընդամենը 46 պատգամավոր է գրանցվել՝ չկա քվորում, որի համար 54 պատգամավորի ներկայություն էր պետք, Փաշինյանի դեմքն այլայլվեց: Նա «մանթաշի» մեջ ընկավ, որ անգամ իր ուսապարկերն այլեւս չեն հարգում իրեն: Տեղում սկսեց նյարդային շարժումներ անել, ոտքերը հատակին տմբտմբացնել, ատամները կրճտացնել, խոժոռված նայել աջուձախ, ներկա-բացակա անել: Մեղավորի քայլքով Փաշինյանին մոտեցավ ուսապարկերի հիմնարկի ղեկավար Ալեն Սիմոնյանը, փորձեց սփոփել, որ շուտով կգան, սակայն Փաշինյանը մինչեւ լրագրողների օթյակ լսելի ձայնով նյարդայնացած նետեց՝ ձեռ ե՞ք առնում, էս ի՞նչ ձեւ ա: Դահլիճում ներկա ՔՊ-ականները աչքները հառել էին դահլիճի դռների կողմը՝ հավանաբար աղոթելով, որ գործընկերները շուտ գան նիստին, եւ Փաշինյանն անկառավարելի չդառնա, միայն Անդրանիկ Քոչարյանն էր հանդարտ ճոճվում իր աթոռին՝ ասես հասկացնելով, թե երեկ ինձ վրա էիք չարախնդում, դե հիմա կերեք:

Ալեն Սիմոնյանը մոլորված այսուայնկողմ էր գնում, փորձում սիրաշահել ընդդիմադիրների սիրտը, որ քարը փեշերից թափեն, գրանցվեն, որ քվորում լինի: Նա անգամ դիմեց Հովիկ Աղազարյանին՝ գուցե Դուք եւ Հակոբ Ասլանյանը մասնակցեք, այն դեպքում, երբ ՔՊ-ից դուրս գալուց հետո Սիմոնյանը հատկապես Փաշինյանի ներկայությամբ առիթը բաց չի թողնում՝ կսմթելու Աղազարյան-Ասլանյան զույգին: Սակայն Աղազարյանն անդրդվելի մնաց՝ ասելով, որ կսպասեն գործընկերներին: Սահմանվածից մոտ 15 րոպե անց նոր նիստը սկսվեց, սակայն Փաշինյանը մինչեւ օրվա վերջը նյարդային վիճակում էր, գրեթե չէր շփվում թիմակիցների հետ, անգամ ընդմիջումներ ի ժամանակ, երբ թվում էր, թե Ալեն Սիմոնյանի հետ պետք է նրա սենյակում անցկացնեն, Սիմոնյանն իր «ախրաննիկների» շքախմբով շրջում էր խորհրդարանի միջանցքներում: Մենք նկատեցինք, որ նիստը սկսվելուց հետո խմբակցության ղեկավար Հայկ Կոնջորյանը հերթով ներկա-բացակա էր անում եւ ուշացողներից հետաքրքրվում պատճառների մասին: ՔՊ-ում խոսում էին, որ Փաշինյանն ուշացողների ցանկ է պահանջել, եւ այս միջադեպն անհետեւանք չի մնալու: Ալեն Սիմոնյանն էլ լրագրողների հետ ճեպազրույցում փորձեց արդարացնել թիմակիցներին, թե ոմանք գործուղման են, առնվազն 4-5 կին էլ փոքր երեխա ունեն եւ այդ պատճառով են գուցե ուշացել:

Սակայն օրվա ընթացքում Կոնջորյանի անցուդարձն արդեն իսկ մատնում էր, որ Փաշինյանը ոչ մի արդարացում չի ընդունել եւ հրահանգել է անգամ նախապես ելույթի համար գրանցված ՔՊ-ականների ելույթները կրճատել, ի պատասխան իր նկատմամբ վերաբերմունքի: Հավանաբար ասել էր, որ մեկ օրում ավարտեն բյուջեի քննարկումը, ինքը վաղը խորհրդարան եկողը չէ: Ուստի Կոնջորյանի մոտ մի ցանկ էլ հայտնվեց՝ նա հերթով մոտենում էր գործընկերներին, ինչ-որ բան ասում ու ջնջում տվյալ ելույթ ունեցողի անունը: Նկատեցինք, որ անգամ ԱԺ փոխխոսնակ Հակոբ Արշակյանն էր ելույթի համար գրանցվել, բայց հանեց ելույթը, որ քննարկումը չտեղափոխվի հաջորդ օրվան:

Մի խոսքով՝ այս երկու օրվա պատկերից պարզ դարձավ, որ ՔՊ-ականները ոչ միայն անպատասխանատու եւ փնթի վերաբերմունք ունեն պետության ու իրենց աշխատանքի նկատմամբ եւ միայն մեր հաշվին բարձր աշխատավարձեր են ստանում, այլեւ տարրական հարգանք չունեն իրենց առաջնորդի նկատմամբ: Կամ էլ ՔՊ առաջնորդի ոտքի տակից հողը փախչում է նաեւ իր թիմի մասշտաբով:



Լուսինե ՇԱՀՎԵՐԴՅԱՆ
lusine.shahverdyan@hraparak.am

ԵՊՀ-Ի ԴԵՄ 10 ԴԱՏԱԿԱՆ ՀԱՅՑ Է ՆԵՐԿԱՅԱՑՎԵԼ

Հունիսին ԵՊՀ ուսանողների հետ տարվող աշխատանքների կենտրոնի փոխտնօրեն Խաչիկ Աբաջյանը մեզ տեղեկացրել էր, որ իրեն ազատել են աշխատանքից՝ առանց հիմնավորումների: Նման ծանուցում ստացել էր նաեւ Կենտրոնի ամբողջ աշխատակազմը:

«Այն, ինչ գրված է այս խայտառակ, անգրագետ ծանուցման մեջ, որեւէ կապ չունի իրավականության եւ աշխատանքային իրավունքի հետ: 2 օր առաջ մարդուն տեղեկացնել, որ նա աշխատանքից ազատված է, կարող էր անել միայն ԵՊՀ այսօրվա ադմինիստրացիան: Ընդ որում՝ նշված որեւէ հոդված կամ դատարանի որոշում չի ենթադրում այն, ինչ անհաջող կերպով փորձել են «հիմնավորել» այս ծանուցման մեջ: Առաջիկայում հանգամանորեն անդրադառնալու եմ այս գործընթացին՝ բացելով բոլոր փակագծերը: Պարոն Հովհաննիսյան, ամաչում եմ, որ Դուք ԵՊՀ ռեկտորն եք (դեռ): «Ես կապ չունեմ, ինձ ստիպում են» խոսքերը ոչ միայն չեն թոթափում Ձեր պատասխանատվությունը, այլեւ խորացնում են իմ ամոթի զգացումը:

ՀԳ. *Իմ ունեցած տեղեկությունների համաձայն՝ սա սկիզբն է, առաջիկայում ԵՊՀ-ում տեղի են ունենալու աննախադեպ իրադարձություններ:*

ՀԳ 2. *Նման ծանուցում ստացել է մեր ամբողջ ստորաբաժանումը»,- գրել էր նա:*

Դեռ ամռանը, «Հրապարակի» հետ զրույցում Խաչիկ Աբաջյանն անդրադարձել էր տեղի ունեցածին. «Ծանուցում ենք ստացել, որ երկու օրից այլեւս աշխատանքի չենք: Նույնիսկ տրամաբանություն չկա Աշխատանքային օրենսգրքի այն հոդվածներում, որոնց հղում են արել: Հոդվածները նշում են, որ պետք է առնվազն երկու ամիս շուտ աշխատակիցներին ծանուցել այդ մասին: Ինչ-որ դատարանի վճռից մեջբերումներ են անում, բացարձակ անհասկանալի, իբրեւ այդ որոշումը ստացել են մայիսին: Առնվազն անհասկանալի է, թե ինչու մայիսից չէին ծանուցել, որ մի ամբողջ թիմ պետք է աշխատանքից զրկվի»:

«Դատալեքս» դատական, տեղեկատվական հարթակից տեղեկացանք, որ այս առիթով Երեւանի պետական համալսարանի դեմ շուրջ տասը աշխատակից դատական հայց է ներկայացրել՝ պահանջելով անվավեր ճանաչել աշխատանքային հարաբերությունները դադարեցնելու մասին ԵՊՀ ռեկտորի 10.07.2025 թվականի թիվ 128/53-Ա հրամանը, իրենց վերականգնել նախկին աշխատանքում եւ պատասխանողից հօգուտ իրենց բռնագանձել միջին աշխատավարձը՝ հարկադիր պարապուրդի ամբողջ ժամանակահատվածի համար: Հայցադիմումը դատարան է մուտքագրվել 15.08.2025 թվականին, դատավորի աշխատակազմին է հանձնվել 20.08.2025 թվականին:

Դատարանը, ուսումնասիրելով ներկայացված հայցադիմումը, արձանագրում է, որ այն ներկայացվել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 120-122-րդ հոդվածներով սահմանված պահանջներին համապատասխան:

Խաչիկ Աբաջյանը «Հրապարակի» հետ զրույցում երեկ նշեց, որ դատական հայցերը ներկայացվել են առանձին-առանձին. «Դատական նիստեր են տեղի ունեցել, առաջիկայում հենց իմ դատական նիստն է տեղի ունենալու: Բոլոր տասը աշխատակիցները դատական հայցեր են ներկայացրել՝ առանձին են քննվում բոլոր գործերը: Այս որոշումը պետք է անվավեր ճանաչվի, քանի որ կատարվել է օրենքի խախտմամբ: Կան գործեր, որ դատաքննության փուլն ավարտվել է, գործերը տարբեր ընթացքների մեջ են գտնվում, առաջիկա օրերին, երբ տեղի ունենա իմ դատական նիստը, ավելի հստակ մանրամասներ կհայտնեմ, սակայն հույս ունենք, որ որոշումը դատարանն անվավեր է ճանաչելու»:

Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՑՈՐԵՆ

ՂԱԶԱԽԱԿԱՆ ՄԼԱԾ ՑՈՐԵՆԻՑ ՍՏԱՑՎԱԾ ԱԼՅՈՒՐԸ ՆՈՒՅՆԻՍԿ ԿԵՆԴԱՆԱԿԱՆ ԿԵՐԻ ՀԱՄԱՐ ՊԻՏԱՆԻ ՉԷ

Շարունակելով մեր սկսած հետաքննությունը, որի ընթացքում նոր ուշագրավ մանրամասներ ենք պարզել, կրկին անդրադառնանք ղազախական ցորենի թեմային: Պարզվում է՝ սկզբնապես Ղազախստանից ցորենի ներկրման ծրագիրը հենց այդպիսին էլ եղել է, որ Հայաստան ուղարկվող ցորենը ներկայացվի որպես պարենային, այսինքն՝ սննդի մեջ օգտագործման ենթակա՝ անկախ իրականում այդպիսին լինել-չլինելուց: Սա հաստատվում է լրատվությամբ, որ 6.11.2025-ին շրջանառվել է ղազախական լրատվամիջոցներում (https://apk-news.kz/export/item-6071): «...Ադրբեջանի եւ Հայաստանի միջեւ ձեռք բերված խաղաղության համաձայնություններն ամրապնդելու համար, Ղազախստանը պարենային հացահատիկի փորձնական խմբաքանակ է ուղարկել Հայաստան՝ նոր երկաթուղային երթուղով»,- հստակեցրել են «Продкорпорация»-ում: Երեկ 15 վագոնից բաղկացած գնացքը հատել է Ադրբեջանի սահմանը, եւ ընդամենը մի քանի օրից ղազախական ցորենը կհասնի ՀՀ Դալարիկ կայարան («Продкорпорация» ԲԲԸ-ն Ղազախստանի հացահատիկի շուկայի ազգային օպերատորն է: Ընկերության միակ բաժնետերը Ղազախստանի գյուղատնտեսության նախարարությունն է):



Դժվար է չնկատել, որ Ղազախստանի «Продкорпорация»-ի սպանիչ հեգնանքը՝ Ադրբեջանի հետ ձեռք բերված խաղաղության համաձայնությունների առիթով Նիկոլ Փաշինյանին եւ ԶՊ-ին անասնակեր ուղարկելու, միանգամայն թափանցիկ ակնարկ է, թե ինչ են վերջիններս, որ նման քայլի են գնացել: IV կարգի ցորենն էլ երբեք սննդի մեջ օգտագործման ենթակա չէ. III կարգի ցորենն է, որ, կախված գլյուտենի տոկոսային պարունակությունից, կարող է սննդի մեջ օգտագործվել կամ ոչ:

2023-ԻՆ, ԵՐԲ ԻՐԱՎԻՃԱԿԸ ԴԵՌ ԱՅՆՔԱՆ ՎԱՏ ՉԷՐ, ՈՐՔԱՆ ԱՅՍՕՐ

Ղազախական ցորենի թեմայով իմ նախորդ հոդվածներում (https://hraparak.am/profile/Lusine-Petrosyan) արդեն մի քանի անգամ գրել եմ, որ «Ղազախստանում ամառային երաշտին հետեւող հորդառատ անձրեւները հանգեցրել են հասկի մեջ հատիկի ծլման: Հասկի մեջ սերմնահատիկի ծլման գործընթացն ուղեկցվում է կենսաքիմիական ռեակցիաների ամբողջ համալիրով: Դրանցից մեկն ալֆա-ամիլազա ֆերմենտի սինթեզման խթանումն է, որը քայքայում է հատիկի օսլան եւ հանգեցնում է Անկման թվի նվազման: Նման ցորենի որակը կտրուկ վատանում է, ընդհուպ մինչեւ հացաթխման որակների կատարյալ կորուստ: Խոնավ հատիկը նաեւ դյուրությամբ վարակվում է սնկային հիվանդություններով, պաթոգեն սնկերը արտադրում են միկո եւ ալֆա տոքսիններ»: Որտեղից էր ինձ այդ տեղեկությունը:

Դրանից հետո, երբ նաեւ մեր տպագրած հոդվածների արդյունքում Ղազախստանից ներմուծված անորակ, կերարտադրության մեջ օգտագործվող եւ ալֆա, միկո տոքսիններով վարակված ցորենի թեման Հայաստանում եկավ հանրային օրակարգ, 7.11.2025-ին էլ «ՓԱՇԻՆՅԱՆԸ ՀՐԱԺԱՐՎՈՒՄ Է III ԿԱՐԳԻ եւ ՎԱՐԱԿՎԱԾ ՑՈՐԵՆԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԻՑ» հոդվածում տպագրեցինք SGS-ի ինֆորմացիան, թե ինչպես են ղազախական լաբորատորիաներում ցորենի փորձաքննության արդյունքները կեղծվում, Աստանայում նախընտրեցին, այնուամենայնիվ, ճշմարտությունը բացահայտել:

10.11.2025-ին Ղազախստանի գյուղնախարարությունն իր պաշտոնական կայքում նոր ձեւակերպմամբ լրատվություն տեղադրեց. «...Հոկտեմբերին Ղազախստանի հացահատիկի ազգային օպերատորը («Продкорпорация») երկարաժամկետ համագործակցության համաձայնագիր է կնքել, որը նախատեսում է հացահատիկի մատակարարում հայաստանյան սպառողներին: Փորձնական խմբաքանակը բաղկացած է 4-րդ կարգի պարենային ցորենից, որը կարող է օգտագործվել ինչպես ընդհանուր նշանակության ալյուրի, այնպես էլ համակցված կերերի արտադրության համար:

Ընդսմին, Ղազախստանը հնարավորություն ունի արտահանել տարբեր կարգի հացահատիկ, այդ թվում՝ կոշտ ցորեն (դուրում) եւ բարձր սպիտակուցային ցորեն (hi-pro)» (https://fcc.kz/ru/novosti-korporaczii/pervaya-partiya-kazahstanskoj-psheniczy-pribyla-v-armeniyu/):

Մինչեւ սեպտեմբերի սկիզբը տեղումներ գործնականում չեն եղել: Սեպտեմբերի առաջին տասնօրյակից սկսած՝ հացահատիկ արտադրող բոլոր շրջաններում սկսեցին անձրեւներ տեղալ, որոնք, նախ, խոչընդոտեցին բերքահավաքին, իսկ երկրորդ՝ հանգեցրին հացահատիկի ծլմանը հասկի մեջ: Հասկի մեջ սերմնահատիկի ծլման գործընթացն ուղեկցվում է կենսաքիմիական ռեակցիաների ամբողջ համալիրով: Դրանցից մեկը ալֆա-ամիլազա ֆերմենտի սինթեզման խթանումն է, որը քայքայում է հատիկի օսլան եւ հանգեցնում է Անկման թվի նվազման: Նման ցորենի որակը կտրուկ վատանում է, ընդհուպ մինչեւ հացաթխման որակների կատարյալ կորուստ: Խոնավ հատիկը նաեւ դյուրությամբ վարակվում է սնկային հիվանդություններով (ֆուզորիոզ եւ այլն), պաթոգեն սնկերն արտադրում են միկո եւ ալֆա տոքսիններ»:

Պրն Ֆուրսովը նաեւ հայտնել է, որ, համաձայն ամենամյա ուսումնասիրությունների, որոնք SGS Quality Map գլոբալ նախագծի շրջանակում անցկացնում է ընկերությունը, 2023-ին Ղազախստանում աճած ցորենի բերքի որոշ նմուշներում ծլած հացահատիկի պարունակությունը հասել է մինչեւ 80-85%-ի, իսկ միջինում կազմել է 15.81% եւ 14.80%:

Իսկ որքա՞ն է ծլած սերմնահատիկների պարունակության թույլատրելի սահմանը ցորենի բերքում: Այդ հարցին ղազախական լրատվամիջոցների համար պատասխանել է երկրի Հացահատիկ վերամշակողների միության (Союз зернопереработчиков Казахстана) նախագահ Եվգենի Գանը: Նա բացատրել է, որ Ղազախստանի տարածքում կիրառվող միջպետական ГОСТ 26574-2017 «Ցորենի ալյուր հացաբուլկեղենի համար: Տեխնիկական բնութագրեր» ստանդարտի համաձայն՝ օտար խառնուրդներից մաքրվելուց հետո ալրաղացներ ուղարկվող ցորենի մեջ ծլած սերմնահատիկները չպետք է կազմեն 3%-ից ավելի: Բացի այդ, պարտադիր է ցորենի խմբաքանակների թեստավորումը՝ միկոտոքսինների (բորբոսային միկրոօրգանիզմների թունավոր նյութափոխանակության արգասիքներ) պարունակությունը պարզելու համար: Արգելվում է նաեւ ծլած հացահատիկի օգտագործումը որպես անասնապահական կեր՝ առանց միկոտոքսիններով վարակվածության աստիճանը պարզելու (Союз зернопереработчиков Казахстана предупредил об опасности использования проросшего зерна. https://www.apk-inform.com/ru/news/amp/1537580):

Ուր 3 %-ը, ո՛ւր 15-80 %-ը... Իսկ ինչ է պատահում, երբ ծլած սերմնահատիկի պարունակության թույլատրելի սահմանը բազմապատիկ անգամ գերազանցող ցորենը, որ ինքնաբերաբար դարձել է անպիտան եւ ֆուրաժային, հետն էլ միկո եւ ալֆա տոքսիններով վարակված, աղացվում եւ խառնվում է թեկուզ որակյալ ալյուրի: Նորից մեջբերենք ղազախական աղբյուրները:

«Ծլած հացահատիկից ալյուր արտադրելը ԽՍՏԻՎ ԱՐԳԵԼՎԱԾ Է, քանի որ նման հացահատիկը մեծ հավանականությամբ վարակված կլինի ալֆա տոքսիններով: Նման հացահատիկից ստացված ալյուրը կարող է հանգեցնել զանգվածային մահերի, եւ սա «страшилка» չէ: Սա ԲՐԵԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ հարց է: Ռիսկի դիմելն անիմաստ է»,- այս մասին «АПК Новости» գործակալությանը հայտնեց Ղազախստանի Հացահատիկ վերամշակողների միության փոխնախագահ Թաիսիա Կոլեգովան:

Կոստանայի եւ այլ շրջանների ալյուր արտադրողները զանգվածաբար ծլած ցորենից ալյուր են արտադրում, այն ֆերմենտացիայի են ենթարկում կայունացուցիչ հավելանյութերով եւ այդպես արտահանում են՝ պատմեցին Միությունում: Ատբասարից Աֆղանստան ուղարկված առաջին խմբաքանակը բաղկացած էր 45 վագոնից: Ներմուծողները բողոքում են, որ այդ ալյուրից պատրաստված հացը դրսից այրվում է, իսկ ներսում մնում է հում: Կոստանայում այն մշակել են քիմիական նյութերով, անկման թվի մակարդակը բարձրացրել մինչեւ 90 եւ ուղարկել: Իսկ Աֆղանստանում խմորն ամբողջությամբ ծորել է թոնիրում, թավայի մեջ են թխել, ներսը, միեւնույն է՝ հում է մնում: Խնդիրն այն է, որ ապրանքի պահպանման եւ տեղափոխման ընթացքում ֆերմենտները քայքայվում են, հետեւաբար՝ նման հավելանյութերով ալյուրի որակը չի կարող կայունացվել: Ավելին, ֆերմենտացիայի ենթարկելը չի ազդում որակի իրական ցուցանիշների վրա, այլ միայն քողարկում է դրանք, ընդհանրության մեջ չլուծելով ապրանքի որակի հետ որեւէ խնդիր, միայն վատթարացնում է վիճակը, եւ վերջնական սպառողին հասնելիս այլեւս ոչ ոք չի կարող երաշխավորել հետեւանքները: Նման ալյուրը վտանգավոր է, քանի որ, մեծ հավանականությամբ, վարակված է ալֆա եւ միկո տոքսիններով, ինչը կարող է հանգեցնել զանգվածային թունավորման: Ծլած ցորենից ստացված ալյուրը նույնիսկ կենդանիների կերի համար պիտանի չէ,- բացատրեց Թաիսիա Կոլեգովան:

DAP պայմաններով Սարիագաշ, այնտեղից էլ Աֆղանստան արտահանվող որակյալ ալյուրի արժեքը կազմում է ոչ պակաս, քան 350 դոլար՝ տոննայի համար, իսկ ցածրակարգ կամ կարգ չունեցող ալյուրը, որ I կարգ ալյուրի փաստաթղթերով արտահանում են, ուղարկում են տոննայի դիմաց 260 դոլարով: Ո՞վ է պատասխանատվություն կրելու աֆղան սպառողների զանգվածային թունավորման համար: Ֆիտո-սանիտարական մարմինն՞ը, թե՞ հավատարմագրված լաբորատորիաները, որ արտահանվող ապրանքի որակը հավաստման սերտիֆիկատներ են տալիս: Միջազգային սկանդալ է հասունանում (“Назревает международный скандал. Опасную муку из проросшего зерна начали массово производить в Казахстане” https://apk-news.kz/news/item-2858):

Այստեղ ընդմիջենք, արձանագրենք, որ ՀՀ իշխանությունը Ղազախստանից ներմուծում է նույնպիսի ֆուրաժային ցորեն, ինչպիսին 2023-ին ուղարկվել է Աֆղանստան եւ սկանդալների հանգեցրել, նորից կոչ անենք Ղազախստանից ցորենի անվան ներքո վարակված անասնակերի ներմուծումը դադարեցնել, իսկ արդեն ներմուծվածը ոչնչացնել: Այլապես կշարունակենք հրապարակումները եւ մի քանի օրից կտպագրենք ավելի էական տեղեկություններ վտանգավոր ցորենի մասին:

Լուսինե
ՊԵՏՐՈՍՅԱՆ
lusine@hraparak.am

ԺԱՄԱՆԱԿ

ՓԱՇԻՆՅԱՆԸ ՄԱՅՐ ԱԹՈՌ ԿԱՐՇԱՎԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 15-ԻՆ՝ ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՎԱՐՁԿԱՆՆԵՐԻ ՀԵՏ

Եվ այսպես, Նիկոլ Փաշինյանը, Հայ առաքելական եկեղեցու եւ Մայր Աթոռի դեմ արշավանք կազմակերպելու հարցում աջակցություն չստանալով հայ հասարակությունից, ստիպված է եղել դիմել օտարերկրյա վարձկանների օժանդակությանը: Օրեր առաջ գրվել էր, որ նա դեկտեմբերի 1-ին մտադիր է ամերիկյան քաղաքացիություն ունեցող եւ Աննա Հակոբյանի աշխատողը համարվող Ստեփան Սարգսյանի միջոցով աղոթք-նախաճաշ կամ անգլերենով prayer breakfast կազմակերպել, որին հրավիրել է նաեւ Ամերիկայում գործող ամենատարբեր եկեղեցիների, աղանդների ու կրոնական կազմակերպությունների ներկայացուցիչների: Ինչո՞ւ ենք սրանց համարում վարձկաններ, որովհետեւ սրանց ուղեւորությունների ճանապարհածախսը, կեցության վարձը եւ այլ ծախսեր իրականացնում է հրավիրող կողմը՝ Նիկոլ Փաշինյանը, իսկ թե ինչ միջոցներից՝ պետբյուջեից, թե ենթադրյալ բռնությամբ եւ սպառնալիքներով իրականացված կամավոր հանգանակություններից, հայտնի է, որ նախաճաշ-աղոթքի մասնակիցներն այցելելու են Մայր Աթոռի թանգարան՝ ծանոթանալու թանգարանի ցուցանմուշներին: Իրականում, Նիկոլ Փաշինյանն ուզում է ընդհարում հրահրել Հայ առաքելական եկեղեցու հոգեւորականների, հետեւորդների եւ իր կողմից գլխավորվող արեւմտյան վարձկանների միջեւ: Փաշինյանի սցենարը հնարավորինս պարզ է. ինքն առաջնորդում է այդ խաժամուժին դեպի Էջմիածին, որի մեջ լինելու են նաեւ Եկեղեցու կողմից կարգալույծ արված նախկին եկեղեցականներ, տարբեր աղանդավորական շարժումների ներկայացուցիչներ, ՀԱԵ հոգեւորականները եւ հավատացյալները փորձելու են պաշտպանել եկեղեցին նման ասպատակությունից: Նիկոլ Փաշինյանն ասելու է՝ տեսեք, թե ովքեր են ՀԱԵ ներկայացուցիչները, տեսեք, թե ինչ մակարդակի մարդիկ են. դուք խաղաղ այց եք կազմակերպել, եկել եք, որ ծանոթանաք Եկեղեցու պատմությանը, թանգարանի ցուցանմուշներին, իսկ նրանք ձեզ դիմավորում են չարությամբ եւ բռնությամբ: Ես՝ որպես այս երկրի ղեկավար, չեմ կարող հանդուրժել այդ չարությունը եւ բռնությունը եւ դրան կիակադրեմ հարյուր անգամ, չէ՝ հազար անգամ ավելի մեծ չարություն եւ բռնություն, ես գործի կդնեմ մեծաթիվ ոստիկանական ուժեր, որոնք Եկեղեցին բռնությամբ կազատեն այդ հոգեւորականներից եւ կապահովեն ձեր մուտքը եկեղեցի, ես էլ կտիրանամ գանձերին: Հնարավոր է, որ այդ ժամանակ էլ, երբ հազարավոր ոստիկաններ կկալանավորեն հայ հոգեւորականներին, Նիկոլ Փաշինյանը եւ տարբեր աղանդների ներկայացուցիչներ համատեղ ուժերով Ստեփան Ասատրյանին կկարգեն կաթողիկոս, մի քանի հարյուր ոստիկան էլ 24-ժամյա ռեժիմով կապահովի նրա գահակալությունը:

Ստեփան Ասատրյանն արդեն սկսել է նախապատրաստվել այդ արշավանքին եւ դրանում իրեն վերապահված դերին: Նա իր ֆեյսբուքյան էջում գրել է. «Վերջին 26 տարիներին կաթողիկոսական գահը զբաղեցնող անձի կողմից խրախուսվում է մեղքը՝ նպատակ ունենալով բոլորին դարձնել իր նման, իր տեսակից: Եկեղեցում տիրող բարքերի պատճառով ժողովուրդը սկսեց հեռանալ իր իսկ Եկեղեցուց՝ ընտրելով հարանվանություններ, այլ կրոններ, ուսմունքներ, աղանդներ… զուգահեռաբար այդ կորուստները եղան նաեւ եկեղեցականների շարքից»: Իբրեւ թե ինքն ավելի շատ է մտածում Հայ առաքելական եկեղեցու մասին, Եկեղեցու հետեւորդների մասին, նրանց՝ այլ աղանդների միանալու դեմ է պայքարում, դրա համար էլ աղանդավորների հետ արշավում է Եկեղեցու դեմ:

Ինչո՞ւ է Նիկոլ Փաշինյանը Հայ առաքելական եկեղեցու դեմ արշավանքի օրը դեկտեմբերի 1-ից փոխել նոյեմբերի 15: Նոյեմբերի 16-ին Էջմիածնում տեղի են ունենալու համայնքի ավագանու ընտրություններ: Այդ ընտրությունները սկզբունքային նշանակություն ունեն Փաշինյանի իշխանության համար, քանի որ ընտրություններում Փաշինյանի եւ նրա կուսակցության պարտությունը ցույց կտա նրա եւ իր կուսակցության սնանկությունը՝ նախանշելով փաշինյանական իշխանության ավարտը: Մինչեւ վերջերս Փաշինյանը համոզված էր, որ վարչական, կրիմինալ եւ նյութական ռեսուրսի չարաշահման միջոցով իրեն հաջողվելու է հաղթանակի հասնել Էջմիածնում, եւ ինքը, հաղթելով այդ ընտրություններում, հնարավորություն կունենա, որպես ընտրություններում հաղթող, արշավել Էջմիածին, եւ իրենց կմիանա նաեւ քաղաքացիների վստահության քվեն ստացած նորընտիր քաղաքապետը՝ այդպիսով լեգիտիմացնելով իրենց արշավանքը: Տեսարանն այսպիսին է. էջմիածինցիները եւս աջակցում են իր արշավանքին, քանի որ իրենց հետ են քաղաքի նորընտիր ավագանիները՝ իրենց ղեկավարով: Բայց Փաշինյանին զեկուցել են, որ իր կուսակցության հաղթելու հավանականությունը ցածր է, ընտրությունները կարող են ավարտվել իրենց համար խոշոր եւ համապարփակ խայտառակությամբ, եւ եթե քաղաքապետ ընտրվի ընդդիմության ներկայացուցիչը, ապա տեղի է ունենալու ճիշտ հակառակը՝ քաղաքային նորընտիր իշխանությունները խոչընդոտելու են դեկտեմբերի 1-ին Էջմիածին օտարերկրյա վարձկանների արշավանքին:

Փաշինյանը նոյեմբերի 15-ին՝ Էջմիածնի ընտրությունների լռության օրը Մայր Աթոռը գրավելու օպերացիա նախաձեռնելով, մտադիր է լուծել 2 հարց. նախ գրավել Մայր Աթոռը, ապա գրավել Էջմիածին քաղաքը. ընտրություններից մեկ օր առաջ քաղաքում բռնություն եւ ոստիկանական տեռոր կազմակերպելով, ստիպել քաղաքացիներին՝ դուրս չգալ տներից եւ չմասնակցել ընտրություններին: Մի խոսքով, նոյեմբերի 15-ին Փաշինյանն իր հայաստանյան զորքով, էն, որ իր հետ գնում են կեղծ պատարագների, եւ օտարերկրյա վարձկաններով՝ մարտի, նպատակ ունի գրավել հայկական դիմադրության վերջին բաստիոնը եւ վերջնականապես հնազանդեցնել ազգային դիմադրությունը: Գուցե սրա դեմ պայքարի ձեւը նրան սադրանքներ իրականացնելու հնարավորությունից զրկելն է:

Ավետիս ԲԱԲԱՋԱՆՅԱՆ

ՀՈՐՍ ԳԵՐԵԶՄԱՆԸ ՉԽՆԱՅԱԾՆԵՐԸ ԽՈՍՈՒՄ ԵՆ ԱՆՁՆԱԿԱՆ ԿՅԱՆՔ ՄՏՆԵԼՈՒ ԱՆԹՈՒՅԼԱՏՐԵԼԻՈՒԹՅՈՒՆԻՑ

Ունենք տեղեկացանք, որ «Իմնեմնիմի» փոդքաստի հաղորդավարներ Նարեկ Սամսոնյանի եւ Վազգեն Սաղաթելյանի հարցաքննությունն ավարտվել է, նրանց մեղադրանք է առաջադրվել խուլիգանության հոդվածով: Առաջիկայում միջնորդություն կներկայացվի դատարան՝ նրանց կալանավորելու համար: Ավելի քան մեկ ժամ տեւած քննչական գործողությունից՝ խուզարկությունից հետո, երեկ առավոտյան ԱԱԾ աշխատակիցները ձերբակալել էին ընդդիմադիրներ Սամսոնյանին եւ Սաղաթելյանին: Հաղորդումն իրավապահներին ներկայացրել է ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանը:

Ըստ նրա՝ տղաները «մտել են իր անձնական կյանք, ընտանիք, անկողին, սպառնալիքներ հնչեցրել»:

Բացի սրանից, Սիմոնյանը Վազգեն Սաղաթելյանի դեմ քաղհայց է ներկայացրել՝ պահանջելով 2 միլիոն դրամ փոխհատուցում, ինչպես նաեւ՝ հրապարակային ներողություն սոցցանցի անձնական էջում: Խոսքը ամռանը եթեր հեռարձակված փոդքաստի մասին է, որի ժամանակ Սաղաթելյանը պատմել է Սիմոնյանի՝ ընկերոջ դստեր հետ հարաբերությունների մասին:

Իրավապահների թիրախում մշտապես միայն ընդդիմադիր գործիչներն են, չնայած տարիներ շարունակ իշխանականներն ու նրանց կողմից կառավարվող էջերը թիրախավորում են ընդդիմադիր գործիչներին, լրագրողներին: Առավել շատ թիրախավորված քաղաքական գործիչներից է ԱԺ նախկին պատգամավոր **Նաիրա Զոհրաբյանը**, որը «Հրապարակ»-ի հետ զրույցում անդրադառնալով իրավապահների գործողություններին եւ ընդդիմադիրներին թիրախավորելուն, նշեց. «Հենց այս պահին կարդում էի Ալեն Սիմոնյանի վրդովված ցիտատը, որ, այո, պետք է պայքարել հայհոյանքի, այլոց անկողինը մտնելու դեմ: Այստեղ գայթակղություն առաջացավ դասական դարձած խոսքն ասելու՝ իյա, իրո՞ք: Այսինքն՝ 2018 թվականից տեռորով՝ մարդկանց անձնական կյանքը հանրայնացնելով, շանտաժներով, հայհոյանքը որպես հաղորդակցության միակ ճանապարհ մեր հանրային խոսույթում հաստատող ուժը, ուժի ներկայացուցիչը խոսում է հայհոյանքի եւ այլոց անկողինը մտնելու անթույլատրելիությունից: Բա Արշակ սրբազանի անկողինը տմ՛տս էր մտել եւ այդ կադրերը հանրայնացրել, բա ո՞վ էր, ՔՊ-ական պատգամավորն էր մեկ այլ կնոջ ուղարկում սեռավարակի թեստ հանձնելու, սպառնում Էդգար Ղազարյանի ականջը կտրել, սպառնում ընդդիմադիր գործիչների գլուխը ջարդել, բա էդ ժամանակ չտեսանք ընդվզում, որ հայհոյանք եւ անկողին մտնելը պետք է բացառվեն: Էդ դո՛ւք դուրս չեք գալիս հականիկոլ ճամբարի գործիչների անկողնուց: 18 թվականից դուք եք նարկոտիկի նման հասարակության մի զանգվածին նստեցրել հայհոյանքի եւ անեծքի վրա: Այս հանցագործությունների եւ ծանր հանցագործությունների կատաստրոֆիկ աճը հենց սենց՝ հասարակությանը հայհոյանքի եւ թշնամանքի վրա նստեցնելու արդյունքն է: Մեր հանրային օրգանիզմը թունավորված է միմյանց հանդեպ ատելությամբ եւ թշնամանքով, ընտանիքներում մարդիկ տարիներով իրենց մերձավորների հետ չեն խոսում, եւ էս, ինչ ասեմ՝ ատելության, թշնամանքի նոբելյան մրցանակակիրներն այսօր խոսում են թշնամանքից եւ անձնական տիրույթ ներխուժելու անթույլատրելիությունից: 18 թվականին, երբ ես հանդգնեցի իմ թեկնածությունն առաջադրել Երեւանի քաղաքապետի պաշտոնում, էն, ինչ որ արեցին իմ, իմ ընտանիքի հանդեպ, էն զարհուրելի բաները, որ արեցին իմ աղջկա նկատմամբ, եւ մահացած հորս գերեզմանն անգամ չխնայեցին սրանք: Այդ նյութերն ամբողջությամբ ինձ մոտ կան, եւ երբ մենք մի օր կունենանք նորմալ դատական համակարգ, հատ-հատ բոլոր անբարոյականների վաստակները, բոլոր կին պատգամավորները, որոնք ես պարզել եմ, որ աշխատեցրել են ամենանողկալի ֆեյքերը, որոնք ամենանողկալի զրպարտանքներն էին գրում իմ հասցեին, բոլորը դատվելու են: Ես սա իմ կյանքի գործն եմ սարքել: Ես տարբեր առիթներով դիմել եմ իրավապահներին, եւ, բնականաբար, բոլոր գործերը կարճվել են, բայց ես մինչեւ Եվրոպական դատարան հասնելու եմ, եւ նրանք՝ բոլորը, իրենց արժանի պատիժը ստանալու են»:

Խոսելով Վազգենի եւ Նարեկի նկատմամբ իրականացված գործողությունների մասին՝ Զոհրաբյանն ասաց. «Ինչ վերաբերում է տղաներին, ապա ես «Իմնեմնիմի» գրասենյակում էի, այնտեղ խուզարկություն էր, ինձ ներս չթողեցին, հետո գնացի Երեւանի քննչական կոմիտե, ես մեկ անգամ չեմ կասկածում՝ տանելու են դատարան եւ իրենց կալանք են տալու: Սա է Հայաստանում «խոսքի ազատության» իրական նկարագիրը»:

Աննա ՊԱՊԻԿՅԱՆ

ԳՐԻԳՈՐ ՄԻՆԱՍՅԱՆՆ ՈՒ ԿԱՐԵՆ ԱՆԴՐԵԱՍՅԱՆԸ ՍԽԱԼ ԵՆ ԱՐԵԼ՝ ԴԱ ՓԱՍՏՎԵԼ Է ՄԻԵԴ ԵՎ ՍԴ ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՎ

ԲԴԽ

Էական կարգապահական խախտման հիմքով՝ Բարձրագույն դատական խորհուրդը 2023թ. հունվարի 26-ին դադարեցրել էր Վճռաբեկ դատարանի դատավոր Սուրեն Անտոնյանի եւ Երեւանի դատարանի դատավոր Արթուր Ստեփանյանի լիազորությունները: ՄԻԵԴ-ը եւ Սահմանադրական դատարանն արձանագրել էին, որ սույն դատավորների իրավունքները խախտվել են, ինչը հիմք է խորհրդի որոշումները վերանայելու համար: ԲԴԽ-ն 2025թ. սեպտեմբերի 17-ին որոշել էր երկու դատավորի վերաբերյալ կայացրած որոշումները վերանայել: Մասնավորապես՝ Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի դատավոր Սուրեն Անտոնյանի լիազորությունները դադարեցվել էին՝ հիմք ընդունելով ՄԻԵԴ մի որոշումը, որով արձանագրվել էր քաղաքացու իրավունքների խախտում:

Սուրեն Անտոնյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու միջնորդությամբ հանդես էր եկել այդ ժամանակ արդարադատության նախարար Գրիգոր Մինասյանը: Իսկ ԲԴԽ-ն՝ Կարեն Անդրեասյանի նախագահությամբ, բավարարել էր նախարարի միջնորդությունը եւ դադարեցրել նրա լիազորությունները: Քանի որ ԲԴԽ-ն դատավորներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու գործերով հանդես է գալիս որպես դատարան, եւ նրա որոշումները վերջնական են ու բողոքարկման ենթակա չեն, Սուրեն Անտոնյանը միանգամից դիմել էր Մարդու իրավունքների եվրոպական դատարան: ՄԻԵԴ-ը Սուրեն Անտոնյանի գործով կասկածի տակ էր դրել Կարեն Անդրեասյանի անաչառությունը, քանի որ «տեղի է ունեցել արդար դատաքննության իրավունքի խախտում»՝ կապված ԲԴԽ նախագահ Կարեն Անդրեասյանի կողմնակալության հետ, կապված նախարար Գրիգոր Մինասյանի հետ ունեցած շատ սերտ հարաբերությունների հետ, որը «դուրս է եկել մասնագիտական հարաբերություններից»: Այդ հարաբերությունների բնույթը կասկածներ էր առաջացրել ԲԴԽ նախագահ Կարեն Անդրեասյանի անաչառության վերաբերյալ: ՄԻԵԴ-ը պարտավորեցրել էր ՀՀ կառավարությանը՝ Սուրեն Անտոնյանին վճարել 5 հազար 20 եվրո, որից 3 հազար 600-ը՝ ոչ նյութական վնասի փոխհատուցման, իսկ 1420 եվրոն՝ կատարած ծախսերի համար: Միեւնույն ժամանակ գտել էր, որ փոխհատուցման առավել նպատակահարմար ձեւը կլինի վարույթի վերաբացումը, ինչը եւ արել է արդեն նոր ԲԴԽ-ն՝ Արթուր Աթաբեկյանի նախագահությամբ:

Ինչ վերաբերում է դատավոր Արթուր Ստեփանյանին, ապա արդարադատության նախարարի 2024թ. մայիսի 23-ի որոշմամբ միջնորդություն էր ներկայացվել ԲԴԽ՝ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ: Դրա համար հիմք էր հանդիսացել այն, որ մի շարք դատական գործերով վճիռները պաշտոնական կայքում դատավորը հրապարակել եւ վճռի օրինակը դատավարության կողմերին տրամադրել էր «օրենքով սահմանված ժամկետների կոպիտ խախտմամբ»: 2024թ. հուլիսի 9-ին ԲԴԽ-ն բավարարել էր արդարադատության նախարարի միջնորդությունը՝ դատավոր Արթուր Ստեփանյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ, եւ դատավորի լիազորությունները դադարեցվել էին: Դատավոր Ստեփանյանն այս որոշումից հետո դիմել էր Սահմանադրական դատարան՝ Դատական օրենսգրքի որոշ դրույթների՝ Սահմանադրությանը համապատասխանելու հարցով: Մասնավորապես այն հարցով, որ դատավորի լիազորությունները դադարեցնելու վերաբերյալ Խորհրդի որոշումն ընդունվում է՝ առանց հաշվարկելու դատական նիստին մասնակցած ԲԴԽ անդամների ձայները: Դատավորը հայցում նշել է, որ իր կարգապահական գործով 2024թ. հունիսի 17-ին կայացած նիստին մասնակցել են ԲԴԽ բոլոր 10 անդամները, սակայն դատավորի լիազորությունները դադարեցնելու վերաբերյալ որոշումը քվեարկելիս հաշվի են առնվել միայն 8 անդամների ձայները: Ավելին՝ լիազորությունները դադարեցնելու որոշման բովանդակությունից հետեւում է, որ ԲԴԽ-ն այդ որոշումը կայացրել է ամբողջական կազմով, ԲԴԽ բոլոր 10 անդամների մասնակցությամբ: ՍԴ-ն Սահմանադրության մի քանի հոդվածներին հակասող էր ճանաչել Դատական օրենսգրքի այն կարգավորումը, ըստ որի՝ ԲԴԽ անդամների 5 կողմ ձայնով կարող են դադարեցվել դատավորի լիազորությունները: Արթուր Ստեփանյանի լիազորությունները դադարեցվել են հենց 5 կողմ ձայնով, ինչը ԲԴԽ-ի մեծամասնության դիրքորոշումը չէ:

2025թ. սեպտեմբերի 17-ի որոշմամբ՝ ԲԴԽ-ն Սուրեն Անտոնյանի եւ Արթուր Ստեփանյանի վերաբացված գործերով նիստեր սկսեց, ապա նոյեմբերի 11-ին հրապարակեց որոշումները, ըստ որոնց, դատավորների լիազորությունները չվերականգնվեցին, ասել է թե՝ ԲԴԽ նոր կազմը ձեւական քայլ արեց՝ վերաբացելով գործի քննությունը, ու հաստատեց Կարեն Անդրեասյանի եւ Գրիգոր Մինասյանի կայացրած որոշումները:

Սուրեն Անտոնյանի ներկայացուցիչ **Էմիլ Ամիրխանյանը** մեզ ասաց, որ որոշումը դեռ չեն ստացել, այս պահին ոչինչ չի կարող մեկնաբանել, նշեց, որ բողոքարկման տարբեր ընթացակարգեր կան, նաեւ՝ ՍԴ դիմելու, բայց դրա մասին կխոսեն այն բանից հետո, երբ ստանան եւ ծանոթանան որոշմանը:

Հանիրավի պաշտոնազրկված դատավորներից **Աննա Փիլոսյանը**, որի գանգատն այժմ քննվում է ՄԻԵԴ-ում, «Հրապարակ»-ի հետ զրույցում անդրադառնալով ԲԴԽ-ի նոյեմբերի 11-ի վճռին, նշեց. «Վերջնական դիրքորոշումներ հնարավոր կլինի կազմել, երբ որոշումները հրապարակվեն, բայց այն, որ միջազգային բարձր դատարանների որոշումները Հայաստանում այլեւս անտեսվում են, կարող ենք փաստել: ԲԴԽ-ն ներկայիս կազմով ուներ հնարավորություն՝ շտկել իրավիճակը, որը ստեղծվել էր ոչ օրինաչափ որոշումներով եւ ոչ օրինական եղանակներով դատավորների լիազորությունները դադարեցնելու պայմաններում: Ինքն այդ հնարավորությունը չօգտագործեց՝ շարունակելով այդ անօրինական գործընթացը»:

- Կանխատեսվո՞ւմ է, որ մյուս դատավորների դեպքում էլ, երբ ՄԻԵԴ-ը հօգուտ դատավորների որոշումներ կկայացնի, ԲԴԽ-ն նույնը կանի, ինչ Ստեփանյանի եւ Անտոնյանի դեպքում արեց:

- Այսպես պատասխանեմ. այս քաղաքական իշխանությունների պարագայում, կարծում եմ, ԲԴԽ-ի քաղաքականությունն այդ մասով չի փոխվել:

- Կարդացի՞լ եք Գրիգոր Մինասյանի գրառումը. հպարտացել է, որ ինքն ու Անդրեասյանն ամեն ինչ ճիշտ են արել:

- Այն, որ ինքն ու Անդրեասյանը սխալ են արել, փաստվել է ՄԻԵԴ եւ Սահմանադրական դատարանների որոշումներով, այն, որ ներկայիս ԲԴԽ կազմը չգիտեմ ինչ հրաշքով կամ պատճառաբանություններով լիազորությունների վերականգնման պատասխանատվության ենթարկելը մերժելու վերաբերյալ որոշումներ չի կայացրել, դեռ չի նշանակում, թե իրենք ճիշտ են, կամ ոչնչանում են ՄԻԵԴ եւ ՍԴ որոշումները: Ես վստահ եմ, որ քաղաքական գործոնով պայմանավորված՝ բարձր դատարանների որոշումները չեն հանգեցրել իրավական այն որոշումներին, որը կհանգեցներ նորմալ, իրավական համակարգ ունեցող պետությունում:

Աննա ՊԱՊԻԿՅԱՆ

ՎՐԱՍՏԱՆԸ ՉԻ ՄԱՍՆԱԿՑԻ ՆԱԵՎ ԵՄ ԸՆԴԼԱՅՆՄԱՆ ՀԱՐՑԵՐՈՎ ԳԱԳԱԹՆԱԺՈՂՈՎԻՆ

Նոյեմբերի 18-ին, ինչպես հայտնի է, Բրյուսելում կկայանա ԵՄ ընդլայնման հարցերով գագաթնաժողով: Ինչ կարելի է սպասել այդ միջոցառումից, եւ արդյոք այն այնքան կարեւոր է, որքան փորձ է արվում ներկայացնել եվրապաշտոնյաների կողմից: Առհասարակ, ընկալումն այնպիսին է, որ այդ գագաթնաժողովը, նույնիսկ եթե այս կամ այն երկրի առնչությամբ կոնկրետ որոշում էլ չկայացվի, միեւնույն է՝ համարվում է կարեւոր եւ նշանային հանգրվան: Այսօրինակ ընկալումը թե՛ եվրապաշտոնյաների մոտ է, թե՛ «շահագրգիռ կողմերի», ինչպես ընդունված է ասել:

Նման միջոցառումների ժամանակ սովորաբար տեղի են ունենում ԵՄ հանդեպ լոյալության ցուցադրական «ռեւերանսներ», «եվրոպական ինտեգրացիայի» գաղափարին ու արժեքներին հավատարմության «մարաթոններ», ինչպես նկատում է քաղաքագետ Սերգեյ Մարկեդոնովն իր վերլուծական հոդվածում: Արդեն հայտնի է, որ սպասվող առաջիկա միջոցառմանը Վրաստանը չի մասնակցելու: Ըստ Եվրահանձնաժողովի խոսնակ Գիյոմ Մերսյեի, Բրյուսելում ափսոսում են, որ Վրաստանը շարունակում է հեռանալ եվրոպական դեմոկրատական ուղուց: Փաստացի, բարձրաստիճան եվրապաշտոնյան հաստատում է, որ այլ պատճառ չկա, որպեսզի Թբիլիսին հրավիրվեր այդ հանդիպմանը: Վրաստանի բացակայությունը տրամաբանական էր ու սպասելի, եթե հիշենք, որ ընդամենը մի քանի օր առաջ՝ նոյեմբերի 4-ին, Եվրահանձնաժողովը հերթական անգամ հրապարակեց զեկույց ընդլայնման խնդիրների վերաբերյալ, որտեղ խիստ քննադատության ենթարկվեցին վրացական իշխանությունները: Դրանից առաջ էլ՝ «Եվրանեսթի» երեւանյան նստաշրջանում եւս մեկ խստաշունչ բանաձեւ էր ընդունվել Թբիլիսիի վերաբերյալ, ինչից հետո Թբիլիսին դադարեցրել էր իր մասնակցությունն այդ ֆորմատին: Եվրամիությունը Վրաստանի իշխող քաղաքական ուժի եւ վրացական իշխանությունների թիրախավորման հարցում խիստ հետեւողական է: Թբիլիսիին մեղադրում են ոչ միայն եվրոպական դեմոկրատական ուղուց հեռանալու, այլ նաեւ արտաքին քաղաքական առաջնահերթությունները փոխելու եւ Մոսկվայի ազդեցության տարածք մտնելու մեջ: Սակայն սա, ինչպես ասում են, դժբախտության դեռ կեսն է: Մյուս կեսն արդեն կապված է ներվրացական իրականության եւ հատկապես՝ Միխայիլ Սահակաշվիլու հետ: Վերջինս շարունակում է իր կողմնակիցներին սնել երբեմն խիստ օրիգինալ գաղափարներով:

Այսպես, ըստ վրաց փորձագետ Արչիլ Սիխարուլիձեի, Սահակաշվիլին առաջարկել է իր կողմնակիցներին՝ վրացական հասարակությունը բաժանել երկու մասի: Մի մասը, հասկանալի է, «ճիշտ հատվածն է ներկայացնում», նրանք, ովքեր դեմ են գործող իշխանություններին եւ հարում են եվրոպական արժեքներին, մյուսն «արխայիկային հարողներն» են՝ «սխալ հատվածը»: Ու ամենից ինտրիգայինն այն է, որ Սահակաշվիլին առաջարկում է «մաքրել վրացական հասարակությունը «ոչ ճիշտ վրացիներից»՝ ընդգծելով, որ այդ երկու հատվածների միջեւ հաշտեցումը հնարավոր չէ, քանի որ տարբերությունները կամ, ավելի ճիշտ՝ հակասությունները, ոչ ավել, ոչ պակաս, «քաղաքակրթական» բնույթի են: Սահակաշվիլին, ըստ էության, արդարացնում եւ քաղաքական ու գաղափարական առումներով հիմնավորում է հասարակական զտումները: Սա թերեւս ամենից կարեւոր հանգրվաններից է, թե ինչու նա չի կարողանում հետ բերել իշխանությունը: Սակայն ԵՄ-ի համար նույնիսկ «հասարակական զտումներ» անցկացնելու թեզն այնքան կարեւոր չէ, որքան Ռուսաստանին «զսպելու» ռազմավարությունը, եւ Բրյուսելում նույնիսկ դրա վրա են պատրաստ աչք փակել՝ եզրակացնում է փորձագետը:

Նարեկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Նապոլեոնի կրծքազարդը վաճառվել է 4,4 միլիոնով

Ֆրանսիայի կայսր Նապոլեոն Առաջինին (1769-1821) պատկանող ադամանդե կրծքազարդը վաճառվել է Ժնեւյան աճուրդում՝ մոտ 4,4 միլիոն դոլարով: Այն 17 անգամ ավելի թանկ է վաճառվել, քան լոտի նախնական արժեքն էր: Աճուրդը կայացել է Sotheby's աճուրդային տանը: Լոտը նախնական գնահատվել է 150-200 հազար դոլար: Ադամանդե կրծքազարդը պատրաստվել է 19-րդ դարի սկզբին: Այն իրենից ներկայացնում է օվալաձեւ ադամանդ, որը կշռում է 13,04 կարատ: Կողքերը զարդարված են տարբեր ձեւի ու չափի մոտ հարյուր ալմաստներով: Զարդը պատրաստվել է 1810 թվականին՝ փարիզյան ատելյեներից մեկում: Նապոլեոնից հետո զարդը պատկանել է Պրուսիայի թագավոր Ֆրիդրիխ-Վիլհելմ 3-րդին եւ երկար ժամանակ պահվել Հոհենցոլերնների արքայատան մոտ: Վերջին մի քանի տարիներին այն գտնվել է մասնավոր հավաքածուի մեջ: Այն Նապոլեոնը թողած է եղել կառքում՝ Վաթերլոոյի ճակատամարտում կրած պարտությունից հետո փախուստի դիմելիս:

ԲՈՂՈՔ

ՆՐԱ ՆՍՏԵԼՈՒ ՏԵՂԸ ՈՉ ԹԵ ԳՅՈՒՂԱՊԵՏԻ ԱԹՈՌՆ Է, ԱՅԼ՝ ՄԱԳԱԴԱՆԸ

Հարություն Համամջյանն օր ծերության աղքատության հեռանկարի առաջ է կանգնել եւ անմնացորդ սիրով ու անհամբեր սպասումով մեր թերթի միջոցով դիմում է Հայաստան աշխարհի ղեկավարներին՝ վարչապետ Նիկոլ Փաշինյանին, ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանին, ՀՀ նախագահ Վահագն Խաչատուրյանին եւ իր անմիջական «շեֆին»՝ շուրջօրյա խնամքի հաստատության տնօրենին՝ այն ծերանոցի, որտեղ ապրում է ինքը: Նրա նամակը հասարակ բողոք չէ՝ իրեն հողից զրկող գյուղապետից, կամ դիմում վարչապետին, այլ հայտարարություն-խնդրանք է:

«Ինչպես մեր մոլորակում, այնպես էլ մեր երկրում բարոյականություննն իրավաքաղաքական կատեգորիա չէ, սակայն ինչ ասես, եթե մարդիկ անմարդկային են»: Իսկ խնդրանքը՝ վերադարձնել իր 7000 հա վարելահողը, որը ստացել է օրինական ու արդար ճանապարհով՝ 1991 թվականին, հողերի սեփականաշնորհումից հետո: Եվ քանի որ պատմությունը տիպիկ է՝ ստի եւ անտարբերության հենքով կառուցված մեր երկրի համար, որի պաշտոնյանե-վաճառքով»,- պատմում է Հարություն Համամջյանը: Ի վերջո, նա համաձայնել է փոխզիջումային տարբերակին՝ 5000 քմ-ին: Մնում էր միայն, որ գյուղապետը սեփականության վկայականը տար, բայց մինչ օրս չեն տվել:

«Ինձ ասաց՝ բողոքեցի՞ր... այդ 5000 քմ-ի վկայականն էլ չեմ տա: Դիմեցի Կադաստրի պետական կոմիտե: Նրանց էլ գրավոր խաբել էր, թե ինձ հասել է 2 բաժին հողամաս: Ընդամենը 3800 քմ: Միայն 2023-ին ՀՀ ԱԺ մարդու իրավունքի պաշտպանության մշտական հանձնաժողովի նախագահ Թագուհի Թովմասյանի գործադրած աներեւլի ջանքերի շնորհիվ կարողացա ապացուցել, որ 1991-ին ինձ անհատույց տրվել է 7000 քմ հող: Իմ ձեռքում է այդ, ինչպես նաեւ այն փաստաթղթերը, որոնց վրա կնիք է, զինանշան եւ ստորագրություն: Հետո էլ ասում եք, թե հայրենիքը պետություն է, սիրում ես հայրենիքը՝ հաղորդիր հանցանքի մասին: Դիմել եմ նաեւ Գլխավոր դատախազություն, սակայն՝ անարդյունք: Դիմումս առաջ գնալու փոխարեն ետ գնաց»,- գրում է պոետ Համամջյանն իրեն բնորոշ ոճով:

կուրորեն վստահել եւ հավատացել են գյուղապետի կանխամտածված, սխալ փաստաթղթերին: Գյուղապետն Աստծո առնելիքն է եւ Աստծո անհաջող էքսպերիմենտը: Նրա՝ գյուղապետ դառնալը ոչ թե բնականոն օրինաչափություն է, այլ տիեզերական պատահականություն: Նրա նստելու տեղը ոչ թե գյուղապետի աթոռն է, այլ՝ Մագադանը՝ ուրանի հանքերը»,- բարկանում է Համամջյանը:

Բոլոր «վերադասները» նրան գրավոր պատասխանել են, թե հարցը կարող է լուծվել միայն դատական կարգով: Ճարահատյալ՝ դիմել է անվճար հանրային պաշտպան Մերի Հարությունյանին, բայց այստեղ էլ է անհաջողության մատնվել: «Նա շուրջ 3 ամիս է՝ ինձ խաբում է, ծգծգում եւ զանազան անմեղսունակ պատճառաբանությամբ՝ հայցը չի տանում վարչական դատարան: Դիմել եմ նաեւ կառավարություն՝ փոխվարչապետ Մհեր Գրիգորյանին, սակայն ինձ պատասխանել է ընդունարանի աշխատակցուհի Անի Կարապետյանը, որը չունի քաղաքացու դիմումներին պատասխանելու իրավունք: Ավելի քան 25 տարի է, ինչ վինտիլները փակել են:

րի մեծամասնությանն իրենց դիմող ՀՀ քաղաքացիները հետաքրքիր են զուտ որպես ֆուտբոլի գնդակ, «տշելու ենթակա, այն վերաբերում է շատերին»:

Արագածոտնի մարզի Նիգավան համայնքի ղեկավար Արտաշ Գալաչյանն իր դուխով գրանցամատյանում պոետին պատկանող 7000 քմ-ն ջնջել՝ դարձրել է 5000 քմ: «Ես 12 տարի օգտագործել եմ այդ 5000 քմ-ն: Չափ գրողները, քարտեզագրողները, գեոդեզիստները եկել չափել են, այդքան է եղել: 2008-ին դիմել եմ Արագածոտնի մարզպետարան՝ բողոքելով, որ գյուղապետը չի տալիս սեփականության վկայական: Մարզպետարանից պատասխանեցին, թե ինձ տրված է եղել 5000 քմ, որի «նկատմամբ կատարվել է իրավունքի պետական գրանցում», սակայն 2000 քմ-ն իբրեւ թե ինձ երբեք չի պատկանել: Այն կարող եք ծեռք բերել միայն աճուրդ

Նա դիմել է ՄԻՊ՝ հողը ստանալու համար: ՄԻՊ աշխատակից Վլադիմիր Հովհաննիսյանը պատասխանել է, թե եթե այնուամենայնիվ գտնում է, որ իր իրավունքները խախտվել են, ապա դրանք կարող է վերականգնել օրենքով չարգելված այլ միջոցներով: Բայց եկեք իրատես լինենք՝ ինչպե՞ս է ծերանոցում ապրող մարդը, որը զրկված է կյանքի տարրական միջոցներից, որն անգամ հեռախոսազանգ չի կարող կատարել եւ «ծնգացնում» է, որ իրեն զանգեն, դիմելու դատարան՝ իր հողային պահանջը բավարարելու հարցով: «Ստացվում է, որ մի բեսպրեդելիստ գյուղապետ քարը գցել է փոսը, իսկ տասնյակ վերադասներ չեն կարողանում այդ քարը հանել փոսից: Նրանք, ինչպես նաեւ հանրային պաշտպանը, առանձնակի շահագրգռված չեն արդարության հաղթանակի համար, քանի որ

Այս մասին տասնյակ անգամներ օրաթերթերով գրել եմ: Սակայն ես գրում եմ՝ ես կարդում եմ: Ինձ հետ այնպես են թշնամաբար վերաբերվում, ասես ես մի այլմոլորակային եմ ու եկել եմ սրանց մոլորակը կործանելու: Իմ խնդրանքը, պարոն վարչապետ, եթե կարող եք՝ ինձ օգնեք: Դատական հայցով դատարան մտնելու համար, առանց պետական անվճար հանրային պաշտպանի միջնորդության, կպահանջվի 200-300 հազար դրամ: Իսկ ես ավելի քան երկու տարի 30 հազարի երես չեմ տեսել: Խնդրում եմ խնդրանքս չմերժեք»,- դիմում է պոետը Փաշինյանին եւ խնդրում, որ հրապարակենք հեռախոսահամարը, որով Փաշինյանը կկապվի իր հետ՝ 098 85 90 88: Խոստանում է ինքն էլ մի երկու բանաստեղծություն կարդալ Նիկոլի համար: Ի վերջո, երկուսն էլ գրչի մարդիկ են:

Սյուզան ՍԻՄՈՆՅԱՆ
syuzan.simonyan
@hraparak.am

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՆՏՐԻԳՆԵՐ, ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ԲԱՐՔԵՐ, ԳԱՂՏՆԻՔՆԵՐ. «ՍՅՈԳՈՒՆ»

Համաշխարհային կինոարվեստի նշանակալի երեւույթներից կարելի է համարել «Սյոգուն» սերիալը՝ Ջեյմս Քլավելի պատմական բեսթսելլերի երկրորդ էկրանավորումը: Այն պատմում է անգլիացի նավաստու մասին, որը հեռավոր միջնադարում՝ 17-րդ դարում, հայտնվում է Ճապոնիայում, երբ երկիրը գտնվում է միջկլանային պայքարի, դավադրությունների եւ ինտրիգների ամենաթեժ փուլում:

Սերիալի գլխավոր հերոսը ոչ թե եվրոպացի նավաստին է, այլ ճապոնացի զորեղ իշխան Յոշի Տորոնագան, որի կերպարը մարմնավորել է «Հոլիվուդի գլխավոր սամուրայ» Հիրոյուկի Սանադան: Շատ կինոփորձագետներ ասում են, որ «Սյոգունն» իր կուլտայնությամբ կարող է համեմատվել աշխարհահռչակ «Գահերի խաղը» ֆիլմաշարի հետ: Ինչու: 1600 թվական: «Էրասմուս» ռազմաառեւտրային նավը, որ մինչև էր հոլանդական «Օսթ-Հնդկական ընկերությունից», դուրս գալով ծով՝ նավարկության, նավաբեկության է ենթարկվում փոթորկի պատճառով եւ հայտնվում խորհրդավոր Ճապոնիայի ափերի մոտ: Անձնակազմի մեծ մասը զոհվել էր սովից, իսկ նավապետն ինքնասպան էր եղել: Նավի շտուրմանն անգլիացի Ջոն Բլեքթորնն էր, որի կերպարը մարմնավորել է Կոսմո Ջարվիսը. վերջինս հանդիսատեսին հայտնի է Նիկոլայ Լեսկովի «Լեդի Մակբեթից»:

Նա եւ մոտ տասը ողջ մնացած նավաստիներ գերության են տարվում ճապոնացի սամուրայների կողմից: Այդ ժամանակ Ճապոնիայի կայսրը նոր էր մահացել, նրա որդին՝ գահաժառանգը, դեռ մանկահասակ երեխա էր, ու երկիրը կառավարում էին հինգ հոգաբարձուները, ովքեր ներկայացնում էին սամուրայական վերնախավը: Ռեգենտներից չորսն ամեն կերպ փորձում են խաղից հանել հինգերորդ ռեգենտին՝ անկոտրում Յոշի Տորոնագային, որն իրապես է հոգ տանում գահաժառանգի համար: Նենգամիտ ու դավադիր մրցակիցները փորձում են ամեն բան անել, որպեսզի ոչնչացնեն լորդ Տորոնագային: Նույնիսկ մեկ այլ դաժան զորավար՝ լորդ Իշիդոն (կերպարը մարմնավորել է Տակեհիրո Խիրան), փորձում է դանակ խրել Տորոնագայի թիկունքը: Սակայն պարզամտություն կլինի կարծել, թե Տորոնագան միամիտ մարդ է: Նա էլ պակաս ինտրիգան չէ եւ անգլիացի Բլեքթորնին որոշում է օգտագործել հանուն իր շահերի: Նրա օգնությամբ փորձում է սեպ խրել կաթոլիկների հանդեպ բարեհաճ ռեգենտների միջեւ եւ իմանալ, թե Պորտուգալիան ու մնացյալ Եվրոպան ինչ նպատակներ ունեն Ճապոնիայի հետ: Նրան այդ հարցում օգնում է նվիրված լեդի Մարիկոն (կերպարը մարմնավորել է Աննա Սավային): Մարիկոն կաթոլիկ քրիստոնյա է, որը տիրապետում է պորտուգալերենի եւ կարող է Բլեքթորնի հետ հաղորդակցվել: Այսպես, Ճապոնիան քայլ առ քայլ սկսում է իր պետական վերածնունդը՝ սյուգունապետության տեսքով, իսկ Բլեքթորնը, որը ճապոնացիների միջավայրում ստանում է «Անձին-սան» (ճապոներեն՝ նավի շտուրման), դառնում է առաջին օտարերկրացի սամուրայը: Սերիալի սյուժերի հիմքում գրող եւ ռեժիսոր Ջեյմս Քլավելի «Սյոգուն» վեպն է, հրատարակված 1975 թվականին: Ի դեպ, Երկրորդ աշխարհամարտի տարիներին Քլավելը երեք տարի անցկացնում է ճապոնական ճամբարում եւ հասցնում սիրել ճապոնական պատմությունն ու մշակույթը:

Վեպը բավական ճիշտ նկարագրում է այն մութ ու խառնակ ժամանակները, որոնք տիրել են Ճապոնիայի՝ Սենգոկուի շրջանի ավարտի եւ Էդոյի ժամանակաշրջանի մեկնարկի սահմանագծին: Յուրաքանչյուր կերպար ունեցել է իր պատմական նախատիպը: Ի դեպ, վեպն էկրանավորվել է նաեւ 1980-ական թվականներին՝ Ռիչարդ Չեմբերլինի եւ Տոսիրո Միֆունեի մասնակցությամբ՝ NBC-ի կողմից:

Նարեկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՇՈՒՐՋ 15 ՏԱՐԻ ԴԱՏԸ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է

1954թ. Արցախի Ասկերանի շրջանում ծնված Գարիկ Դադայանի դատը ամերիկյան հեռուստասերիալի նման խառը սյուժե ունի եւ սերիալի նման էլ երկար տարիներ ձգվում է: Գ. Դադայանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա 2010թ. մարտի սկզբներին գտնվելով Մոսկվա քաղաքում, Երեւանում գտնվող ՀՀ քաղաքացիներ Հրանտ Օհանյանից եւ Սումբատ Տոնոյանից հեռախոսազանգով ստանալով առաջարկ՝ Վրաստանում գերհարստացված ուրան ռադիոակտիվ նյութ իրացնելու նպատակով այն հայթայթելու եւ իրենց տրամադրելու վերաբերյալ, գործարքից ակնկալվող շահույթը նյութի իրացումից հետո բաշխելու պայմանով, համաձայնության է եկել վերջիններիս հետ՝ մտահղացման իրագործմանը մասնակցելու եւ օժանդակելու հարցում եւ «Յունիստրիմ» բանկային փոխանցման համակարգով ստանալով իր կողմից որպես ճանապարհածախս պահանջված եւ Ս. Տոնոյանի անունից ուղարկված 1000 ԱՄՆ դոլար գումարը, 2010թ. մարտի 10-ին Մոսկվա-Երեւան չվերթով վերադարձել է Երեւան եւ նույն օրը Հ. Օհանյանին տրամադրել ապօրինի ձեռք բերված՝ ծխախոտի տուփի մեջ տեղադրված 17 գրամ կշռով գերհարստացված ուրան ռադիոակտիվ նյութ, որից հետո վերջինս Ս. Տոնոյանի հետ 2010թ. մարտի 11-ին ռադիոակտիվ նյութը ՀՀ մաքսային սահմանով մաքսանենգ ճանապարհով տեղափոխել են Վրաստանի Թբիլիսի քաղաք եւ նույն օրը փորձել իրացնել այն, սակայն հայտնաբերվել են Վրաստանի իրավապահ մարմինների աշխատակիցների կողմից:

Տավուշի մարզի առաջին ատյանի դատարանում Քրեական օրենսգրքի 38-215-րդ հոդվածի 2-րդ մասով եւ 233-րդ հոդվածի 1-ին մասով առաջադրված մեղադրանքներով դատավարությունում Գ. Դադայանն իրեն մեղավոր չի ճանաչել: 2011թ. մայիսի 25-ին Տավուշի մարզի առաջին ատյանի դատարանը վճռել է Գ. Դադայանին մեղավոր ճանաչել առաջադրված հոդվածներով, նրան դատապարտել 7 տարի ժամկետով ազատազրկման, գույքի բռնագրավմամբ: Դադայանի պաշտպանը դատավճռի դեմ ներկայացրել է վերաքննիչ բողոք: 2011թ. հուլիսի 13-ին Վերաքննիչ քրեական դատարանը որոշել է վերաքննիչ բողոքը մերժել եւ Տավուշի մարզի առաջին ատյանի դատարանի 2011 թ. մայիսի 25-ի դատավճիռը թողնել օրինական ուժի մեջ: Դադայանի պաշտպանները ներկայացրել են վճռաբեկ բողոք: 2011թ. սեպտեմբերի 17-ին Վճռաբեկ դատարանը որոշել է Գ. Դադայանի վերաբերյալ Վերաքննիչ քրեական դատարանի 2011 թ. հուլիսի 13-ի որոշման դեմ Դադայանի պաշտպանների վճռաբեկ բողոքը վերադարձնել: Տավուշի մարզի դատարանում քննվել է Գ. Դադայանի վերաբերյալ քրեական գործը, իսկ Հրանտ Օհանյանի եւ Սումբատ Տոնոյանի վերաբերյալ գործը քննվել է Վրաստանում: Գ. Դադայանը ներպետական դատարանների կողմից իր նկատմամբ թույլ տրված մարդու իրավունքների խախտումների վերաբերյալ գանգատ է ներկայացրել Մարդու իրավունքների եվրոպական դատարան: ՄԻԵԴ-ի 2018թ. սեպտեմբերի 6-ի վճռով գանգատը համարվել է ընդունելի: «Դադայանն ընդդեմ Հայաստանի» գործով Եվրոպական դատարանն արձանագրել է, որ Դադայանի նկատմամբ տեղի է ունեցել «Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի եւ 3-րդ կետի «դ» ենթակետի խախտում՝ կապված իր դեմ ցուցմունք տված անձանց՝ Հրանտ Օհանյանին եւ Սումբատ Տոնոյանին հարցաքննելու հնարավորությունից զրկված լինելու հետ: Վճիռը 2018թ. դեկտեմբերի 6-ին մտել է օրինական ուժի մեջ: Եվրոպական դատարանի վճռի հիման վրա սույն գործով ներկայացվել է վճռաբեկ բողոք՝ նոր հանգամանքի հիմքով դատական ակտերը վերանայելու վերաբերյալ: Վճռաբեկ դատարանի քրեական պալատը 2019թ. սեպտեմբերի 18-ին որոշել է Գ. Դադայանի վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատի 2011 թ. սեպտեմբերի 17-ի որոշումը նոր հանգամանքի հիմքով վերանայել: Վերանայման արդյունքում Գ. Դադայանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 38-215 հոդվածի 2-րդ մասով եւ 233 հոդվածի 1-ին մասով Տավուշի մարզի առաջին ատյանի դատարանի 2011 թ. մայիսի 25-ի դատավճիռը եւ այն օրինական ուժի մեջ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2011 թվականի հուլիսի 13-ի որոշումը բեկանվել է, ու գործն ուղարկվել Տավուշի մարզի առաջին ատյանի դատարան՝ նոր քննության: 2019 թ. նոյեմբերի 22-ին քրեական գործն ընդունվել է Տավուշի մարզի առաջին ատյանի դատարանի վարույթ, որոշում է կայացվել դատական քննություն նշանակելու մասին: Եվրադատարանի վճռով Հայաստանի կառավարությունը Գարիկ Դադայանին վճարել է 2400 եվրո բարոյական փոխհատուցում, 1000 եվրո՝ դատական եւ այլ ծախսերի համար: Այս բազմաչարչար գործով Տավուշի մարզի առաջին ատյանի դատարանում նոյեմբերի 25-ին դատական նիստ է նշանակված:

Ոսկան ՍԱՐԳՍՅԱՆ

Ազատ խոսքի Ձեր հրապարակում կարող է տպագրվել Ձեր խոսքը: Գրեք մեզ, զանգեք մեզ
011 (55,94) 52 66 70, info@hraparak.am
Երեւան 0010, Մաշտոցի 4

ԿԱՐԴԱՑԵՔ ՀԱՋՈՐԴ ՀԱՄԱՐՈՒՄ

Բաժանորդագրություն
Բաժանորդագրության համար դիմեք՝
Պրեսս Ստենդ՝ 093 88 68 01
Բլից մեդիա 52 53 01

Հրապարակ
Գլխավոր խմբագիր **Արմինե Օհանյան**
թողարկման պատասխանատու info@hraparak.am
Ստորագրված է տպագրության 14.11.2025թ., տպագրվել է «Գինդ» տպագրատանը: Տպաքանակը՝ 3000 օրինակ:

ՈՉ ԹԵ ՌՈԲԵՐՏԻ ՈՒ ՍԵՐԺԻ ՀԱՅԱՍՏԱՆԻՑ ԼԱՎԸ, ԱՅԼ ԻՐ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ՊԱՀՈՂ ԱՐԴԱՐ ՀԱՅԱՍՏԱՆ

Մենք՝ որպես Հայաստանի Հանրապետության քաղաքացիներ, ամեն անգամ զարմանում ենք, երբ բախվում ենք պետական գործիչ դառնալու անկարողությանը: Հատկություն, որն առկա է Հայաստանի վերջին սերնդի իշխանավորների մոտ: Զարմանում ու զայրանում ենք, որովհետեւ նրանց գործելակերպից ու ամենօրյա խոսույթից հասկանում ենք, որ յոթուկես տարուց ավելի իշխանության լինելով, այս մարդիկ այդպես էլ չեն կարողանում հասկանալ, որ հայ-թուրքական ու հայ-ադրբեջանական հարաբերությունները չեն կարող միայն խաղաղության մասին լինել եւ Հայաստանի Հանրապետության զարգացման մասին չլինել:

Չեն կարողանում հասկանալ, որ երբ այդ հարաբերությունները միայն խաղաղության եւ ոչ թե զարգացման մասին են լինում, դրանք մեզ արցախահայության վերադարձի իրավունքը չպաշտպանող են դարձնում, դրանք մեզ մեր գերիների վերադարձը չպահանջողներ են դարձնում, դրանք մեզ Ադրբեջանի կողմից օկուպացված Հայաստանի տարածքները չվերադարձնողներ են դարձնում:

Չեն հասկանում, որ երբ դրանք՝ այդ հարաբերությունները ոչ թե զարգացման, այլ միայն խաղաղության մասին են լինում, դրանք մեզ՝ թշնամու պարտադրանքով Սահմանադրությունը փոխողներ են դարձնում, իսկ վաղը կամ մյուս օրը նույն թշնամու պարտադրանքով նաեւ 100, 200 կամ 300 հազար ադրբեջանցու վերադարձին հարմարվողներ էլ կդարձնեն:

Ավելին, երբ հայ-թուրքական եւ հայ-ադրբեջանական հարաբերությունները ոչ թե Հայաստանի Հանրապետության զարգացման, այլ միայն խաղաղության մասին են լինում, դրանք մեզ սեփական բանակն արհամարհող ու նրա դերակատարումը նսեմացնող են դարձնում: Երբ դրանք այդպիսին են լինում, երկրի քաղաքական ղեկավարության պարտադրանքով մեր հատուկ ջոկատայինները Մայր Աթոռի վրա հարձակվող խաժամուժի են վերածվում:

Երբ այդ հարաբերություններն այդպիսին են լինում, մեր երկրում սոցիալական չպաշտպանվածությունն ու անարդարությունը չգրված օրենքի ու կյանքի նորմի են վերածվում, իսկ Սփյուռքը՝ Մայր Հայաստանից օտարված, Հայաստան-Սփյուռք հարաբերություններն էլ ոչնչացված ու քաոտիկ են դառնում:

Սակայն միայն այսքանը չէ, ինչն այս իշխանությունների մոտ այսքան վատ է ստացվում: Նրանց մոտ ավելի վատ, թերեւս, իրենց հասցեին հնչած քննադատությանը հակադարձելն է ստացվում: Հարցն այն է, որ ամեն անգամ, երբ հասարակությունը նրանց ապաշնորհ կառավարմանը բախվելով քննադատում է նրանց, նրանք, համապատասխան հետեւություններ անելու փոխարեն, ամեն անգամ Ռոբերտի ու Սերժի ժամանակն օրինակ բերելով են իրենց արդարացնում:

Իսկ այդպես են արդարացնում, որովհետեւ չեն հասկանում, որ եթե անգամ այսօրվա Հայաստանը Ռոբերտի ու Սերժի Հայաստանից ավելի լավ Հայաստան էլ լինի, միեւնույն է, դա հայաստանցուն ու հայ մարդուն ոչ մի բանով չի սփոփի: Չի սփոփի, որովհետեւ ոչ հայաստանցու եւ ոչ էլ հայ մարդու նպատակն այսօր ամենեւին էլ Ռոբերտի կամ Սերժի Հայաստանից լավ Հայաստան ունենալը չէ: Նրանց այսօրվա սպասելիքներն ու տեսլականներն ինքն իրեն պաշտպանել կարողացող, արդյունավետ տնտեսությամբ, սոցիալապես արդար ու ժամանակակից Հայաստան ունենալու հետ են կապված: Սպասելիքներ, որոնք ոչ միայն սրանք չեն արդարացրել, այլեւ հիմնովին ձախողել են:

Գալուստ ՍԱՐԳՍՅԱՆ

Լրատվական գործունեություն իրականացնող՝ «Հրապարակ օրաթերթ» ՍՊԸ, Պետ. գրանցման վկայական՝ 03Ա 082118 տրված 09.09.08
Երեւան 0010, Մաշտոցի 4, հեռ. 52 66 70, info@hraparak.am